



613.88

**ԳԵՐԵԶՄԱՆՔ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ**

Կ. Ա. Մ

ՏՈՒՓԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՔ

ԵՒՐՈՊԻՈՅ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՅ


ԱՐԴԻ ԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՄԱՅ



ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅԿՈՒՆԻ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

A 6805



Կ. ՊՕԼԻԱ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԳԱՅԱՔԱՆ
— 1871 —

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՖԱՔԵՍՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՔԻՒՐՔԸՆԻ ԽԱՆ , ՎԱՐԻ ՑԱՐԻ . ԹԻՒ 26

ՅԱՌԱՋԱՐԱՆ

—

ինչպէս որ ամեն ուրիշ աղքաց՝ նոյնպէս ալ մեր աղքին երիտասարդաց մէջ, այս վերջին տարիներս տուփական հիւանդութեանց, այսինքն Սերմնահոսութեան, Միզանցքարորբոքման և Մաշողական ախտից օրէ օր ամենաերագ ու կենսապառ ընթացքը տեսնելովնիս և դիտելովնիս, ալ Հայրեան մը եւս չուզելով յապաղել՝ ահաւասիկ Դրօյի մը նուիրեցինք Հայ երիտասարդութեան, շայն վերոյիշեալ զարհուրելի և միանդամայն զղուելի հիւանդութիւններէն զգուշացնելու և կամ ազատելու համար, որոնց տխուր հետեւանքներն անուրանալի են արդարեւ: Մարդկային ընկերութեան անարժան մէկ անդամն է նա՝ որ դիտէ յիշեալ չարեաց առջեւը տանելու միջոցները և լսիկ հանդիսական մը կը կանգնի իւր բոլորակքը տեղի ունեցած կոտորածներուն:

Մարդկութիւնը և քրիստոնէութիւնը միաբերան բոլորքելու իրաւունք ունին այնպիսի անձի մը դէմ, վասն զի այնպիսոյն անհրաժեշտ սպարտաւորութիւնն է իւր ամեն կրցածը ընել, և իւր սամեն տեղեկութիւնները հրատարակել, յօդուտ մարդկային ընկերութեան, որոյ շնորհիւ ինքը կը վայելէ ամեն տեսակ խաղաղութիւնք և երջանկութիւնք:

Իսկ մեք որ Եւրոպիոյ մեզուածան հեղինակաց շնորհիւ բաւական տեղեկութիւն ստացած եմք մարդկային կազմութեան ամեն օրէնքներուն՝ և նորա ենթակայ եղած ամեն թշուառութեանց և մանաւանդ Տոփական հիւանդութեանց նորա վրայ

ունեցած ահարկու ներդորժութիւններուն վրայ , չէինք կրնար առանց խղճմտանքնիս բթացնելու ձայն չի բարձրացնել բոլոր այն Հայ երիտասարդ - ներուն՝ որոնք անմեղ գառնուկներու նման ցատկուտելով և ուրախութեամբ իրենց գահիններուն ետեւէն կ'երթան և կը կորսուին :

Անմեղ երիտասարդութիւնը այսօր փրկարար ձեռքի մը կարօտ է , իմ սիրելի ընթերցողս , ուստի ներէ՛ ինձ , կ'աղաչեմ , 'ի սէր Հայ երիտասարդութեան ու մարդկութեան , երբոր այս Գրքիս մէջ տեսնես ամեն բան բացորոշ խօսիլս , համոզուէ՛ ինձ որ մեր արդի սովորական քաղաքականութիւնը ամենեւին յարաբերութիւն չունի ճշմարիտ պարկեշտութեան հետ . վասն զի նա իւր անթափանցելի վարագոյրովը կը ծածկէ մեր ներքին աղէտները , եւ հետեւաբար նոցա զարհուրելի կերպարանքը մեր տեսութենէն հեռի պահելով , կը զրկէ զմեզ հսկողութեան փրկարար պարիսպէն . և ո՛հ , մեր երիտասարդաց շատերը սոյն սովորական քաղաքականութեան պատճառաւ է որ օրէ օր գերեզմանաց մէջ կը թաւալին :

Գիտեմ , շատերը որ ամենեւին տեղեկութիւն չունին մարդկային կազմութեան օրէնքներուն վրայ՝ պիտի դատապարտեն վմեղ և ծուռ մեկնութիւններ պիտի տան մեր արդի աշխատասիրութեան . սակայն մենք , որ նպատակնիս բարի է , ամենեւին չենք կարող նոցա ըսելիքը և գանգատները բանի տեղ դնել , և մեր պարտականութիւնը չը կատարել :



ԳԵՐԵԶՄԱՆՔ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ



ԳԼՈՒԽԻ Ա.

ՄՆՈՑԻ ԶԳՈՒՇԱԿՈՐՈՒԹԻՒՆՆ



“ Աէս ճշմարտութիւնը ամբողջ ստութենէ մը
աւելի վտանգաւոր է ո :

Վերջապէս եկած հասած է ժամանակը՝
որ մենք ազատիմք ալ այն կեղծ և շինծու ա-
մօթխածութենէն, որ մեր աճումը վիրաւորած
և հարազատ անմեղութիւնը կերպարանափոխ
ըրած է. բաւ եղաւ ալ մարդկային ընկերու-
թեան կրած վսասները այս անհարազատ պար-
կեցութենէն, որ կը թողու ախտերուն զար-
հուրելի կերպարանքները ուղած աստիճաննե-
րուն հասնելու, և փոխանակ զանոնք երեւան
հանելու և անոնց դարմանները դանելու,
կ'ստիպէ զմեղ զզուանօք երես դարձնել անոնց-
մէ, և թողուլ որ կը ծեն և բնաջինջ ընեն մեր
ամբողջ կաղմուածքը :

Անշուշտ շատ անձինք կան դեռ՝ որ մեր
վերոգրեալ խօսքերը կը դատապարտեն, և
մնուի զգուշաւորութեամք մը կը փափաքին՝ որ
մարդկային ընկերութիւնը, որչափ որ հնարա-

ւոր է , տղէտ մնայ իւր բարելաւութեանը : կայ մէկ անհարազատ պարկեշտութիւն մը , որ ամենեւին յարաբերութիւն չունի հարազատ պարկեշտութեան հետ , որ կնկան մը շնորհքներէն մին է , և որմէ ամենարիրտ մարդն անդամ պարտի իւր բաժինն ունենալ . ահա այս ամօթխածութիւնն է որ մարդս բոլորովին աննըկատ կ'ընէ հետեւանքներու : թէ և կենաց աղբիւրը աստիճանաբար կը ցամաքի , թէև հիւանդութիւնը անթիւ տեսակներով զմեզ ճղակտոր կ'ընէ , թէ և մահը Արարչին արարածներուն ամենագեղեցիկները կը յափշտակէ , թէ և մարք իւրեանց զաւակներուն վրայ կուլան , նոցա նուազումը , տկարութիւնը և դրեթէ մահուան դոյնը առած լինելնին տեսնելով , թէև կը տեսնեմք մեր Երիտասարդ բարեկամաց տարածամ մահուան ճիրաններուն մատնուելով անդառնալի Երկիրն Երթալնին , և այլն , և այլն . և թէ և բոլոր այս տխուր չարեաց ամենագըլխաւոր պատճառին վրայ տեղեկութիւն ունինք (որն որ պիտի բացատրուի այս աշխատութեան մէջ) սակայն սովորասէր ընկերութիւնը՝ դեռ կը խօժուի այսպիսի ամենակարեւոր և փափուկ կէտի մը վրայ խօսողին դէմ . . . սովորութիւնն . . . որ ամենեւին հոգ ըներ անթիւ զաղրագործութիւնները , միայն թէ խաւարի մէջ տեղի ունենան և ընկերութեանց մէջ չի յիշուին . թէ և ընկերութեան ամեն մէկ անհատ շատ աղէկ գիտէ , որ իւր դադտնիքը ուրիշներն ալ ունին , սակայն չի կայ մէկը որ

բարձրածայն հնչէ զայն և կամ թէ թուղթի մը
կտորի վրայ դրել համարձակի . այսպէս սովո-
րութեամբ թէև ամեն մէկ զուարթ և ան-
խորհուրդ խուժան , որոնք նոյն սովորութեան
տաճարին մէջ կ'երկրպագեն , դիտեն թէ ա-
մեն ուրիշ անհատ տեղեակ է այս զազրագոր-
ծութեան գոյութեանը , և շատերուն տգիտա-
բար նոյն զազրագործութեան գերի եղած լի-
նելնին՝ առանց հետեւանքին տեղեակ լինելու .
սակայն ոչ ոք կը համարձակի ձայն բարձրա-
ցընել այսպիսի վտանգաւոր կացութեան մը դէմ:
Այս խնդրոյս վրայ աւելի բացատրութիւններ
տալու համար շատ բան դրել հարկաւոր է .
բայց մենք ընթերցողաց ձանձրութիւն չի տա-
լու համար , բաւական կը սեպենք ըսել թէ
« Բնութիւնը այս տեսակ բաներու մէջ արհես-
տէն աւելի լաւ առաջնորդ մի է » . . . և ես կը
զարմանամ այն անձանց վրայ , որք կը պար-
ծենան թէ իւրեանց աղջիկները լիովին ան-
տեղեակ են՝ ամուսնութեան նկատմամբ տեղի
ունենալիք իրողութեանց և ծննդական գոր-
ծարաններու վրայ . և շիտակը չեմ քաշուիր
հարցնելու թէ , ինչու իրենց աղջիկները տե-
ղեկութիւն ունին ստամոքսի , բերնի , աչքի և
անոնց ըրած դործողութիւններուն վրայ , մի-
թէ կայ այնպիսի պատճառ մը՝ որ աղջիկները
իրենց կազմութեան մէկ մասը ուսանելու՝ և
ուրիշ մաս մը չուսանելու ստիպէ . . . ամենեւին
պատճառ չի կայ , և հետեւաբար այսպիսի ըզ-
դուշաւորութիւն մը բոլորովին անընդունելի:

է . և կամ թէ ոչ մարդակազմութեան նկատ-
մամբ գտնուած բոլոր գիտութիւնները , պէտք
է որ գատապարտուին կամ մերժուին : Շատ
ծնողքներ իւրեանց աղջիկներուն կուրծքերնին
սեղմելով կրած վնասներնին տեսնելով , երբ կը
համոզուին թէ կուրծքի նկատմամբ կազմա-
րանական գիտութիւնը շատ կարեւոր է նոցա
համար , հապա ինչու համար նոյն գիտութիւնը
կարեւոր չի պիտի լինի նոցա ծննդական դոր-
ծարանաց նկատմամբ :

Դարձեալ այնպէս կարծուած է թէ աղջիկ
մը թէ որ մէկէ մը չուսանի իւր ծննդական
դործարանաց ի՞նչ նպատակներու համար դոր-
ծածուիլը , լիովին տգէտ կը մնայ նոյն իրու-
ղութեանց վրայ . բայց ես կ'ըսեմ , թող ծնողք
ամենեւին այնպիսի կարծիքով մը ինքզինքնին
չի խարեն , վասն զի թող լաւ գիտնան թէ
« բնութեան ձայնը մեր լուութէնէն զօրաւոր
է » , որ անպատճառ պիտի մղէ աղջիկները՝ որ
ուսկից լինի թող լինի , ուսանին նոյն իրողու-
թիւնները և հետեւաբար շատ անդամ գէշ
աղբիւրէ մը պիտի քաղեն իւրեանց գիտու-
թիւնը , և ան ալ անշոշտ վտանդաւոր , ծուռ
և բարոյականութիւննին եղծող տեղեկութիւն-
ներ : Ծնողք երբ ինքզինքնին կը միսիթարեն
իրենց աղջկանց այս մասին նկատմամբ ունե-
ցած տգիտութիւններուն համար , նոյն միջու-
ցին աղջիկները վտանդաւոր և բարոյականու-
թեան դէմ խել մը սկզբունքներու տէր եղած
են արդէն : Բնութիւնը աղջիկ մը արբունքի

հասցնելով՝ իմաց կուտայ նորա թէ ինք կնութեան պաշտօնը ունենալու է, և աղջիկը նորա ձայնին լսելով պիտի սկսի փնտռել այն գիտութիւնը, որով ինքը տեղեակ պիտի լինի կնութեան պաշտօնին ինչ լինելուն. « Թող ծընողք արդիւեն իւրեանց աղջիկները ճշմարիտ աղբիւրներու դիմելէ . սակայն թող միշտ ալ վստահ լինին որ նոքա վտանգաւոր աղբիւրներու պիտի դիմեն » : Բայց մենք մեր նպատակին դառնանք . մի պատմեր քու զաւակիդ թէ դրացիին տունը գող մտեր է, չըլայ որ նա ալ գող լինի . մի պատմեր նորա մարդասպանութեան պատմութիւն մը՝ որ մարդասպան չլինի, և մի պատմեր նորա թէ մէկը յուսահատաբար ինքինքը սպաններ է, չըլայ որ նա ալ օր մը անձնասպան լինի . . . յիմարական չեն այս դասերը : Ուրեմն ինչու յիմարական սկզբունք մը չի պիտի սեպենք տղայոց գիճութեան նկատմամբ տրուելիք խրատներուն մերժուիլը, և մանաւանդ քանի որ բնութիւնը թէ և տղու մը գող, մարդասպան և անձնասպան լինիլ չուսուցաներ, կամ զանոնք ուսանելու մղում մը չի տար, բայց գիճութիւնընելու կուտայ . ուրեմն ինչու համար աղջիկներուն չափ տղայ մը չի պիտի խրատենք որ գիճութիւն չընէ, ինչու գիճութեան ամեն զարհուրելի արդասիքները չի պիտի իրեն պատմենք . միթէ ծնողք կատարելապէս համոզուած չեն դեռ, թէ տղայք որ և լոյէ կերպով գիճութեան կ'սկսին առանց իրենց ծնողաց գի-

տութեանը . և ծնողք արդեօք այս չարեաց
առջեւը առնելու համար գտածն են ուրիշ մի-
ջոց մը՝ որ կարեւորութիւն չեն տեսներ իւր-
եանց տղաքներուն խօսիլ գիճութեան և անոր
զարհուրելի արդասիքներուն վրայ , որով շատ
չարիքներու առջեւ առնուլ միայն հնարաւոր
է : Ուրեմն վայելուչ չէ թէ որ ծնողք ալ մէկ-
դի դնեն իւրեանց այս նախապաշարեալ տգի-
տութիւնը , և Արարչին իրենց յանձնած զաւ-
կրներուն բարեացը համար՝ դիմեն այն մէկ
հատիկ միջոցին , որով հնարաւոր է միայն ա-
պագայ սերունդի մը փրկութիւնը և երջան-
կութիւնը :

Հռչակաւորն Լալէմանտ այսպէս կ'ըսէ հա-
ռաչելով . «Գիրք մը չունինք ամենեւին որ խօ-
սի այնպիսի հիւանդութեան մը վրայ , որ մարդու
կը նուաստացնէ , նորա երջանկութիւնը կը թու-
նաւորէ և մարդկային ամբողջ ընկերութիւնը
կը պառակտէ » . և Ըսմիթ այսպէս կը խօսի .
«Յիրաւի խիստ զարմանալի է որ հեղինակ մը
չի կայ որ գիճութեան նկատմամբ խօսի ինչպէս
որ ոլէտք է » : Խոկ մենք կ'ազաղակեմք թէ
դաժան է և ամբարիշտ նա որ լաւ դիմնալով
գիճութեան սոսկալի ճարակումը պատանեաց
և երիտասարդաց մէջ , փոխանակ ողբալու նո-
ցա կտրեկցութեան արժանի կացութեան վրայ ,
և փափաքելու որ այս չարեաց նկատմամբ ա-
մենուն մաքերը լուսաւորող հեղինակութիւններ
հրատարակուին , կ'ելնէ և անխղճարար դէմկը
խօսի մեզ մեր արդի աշխատութեան նկատ-

մամբ որ խղճմտանքի կատարեալ խաղաղութեամբ ահաւասիկ կը հրատարակեմք :



Գլուխ Բ.

Գիճ՛ՈՒԹԻՒՆ

“Մոլութիւնը այնպիսի ճիւաղ մի է :
զոր ատելու համար տեսնել հարկ է ու :

Գիճութեան վտանգաւոր սովորութիւնը
կենաց մէջ շատ կանուխ սկսած է, մանաւանդ-
այն երկիրներուն մէջ, որոնց կլիմաները ծնըն-
դական գործարաններուն վրայ շատ ներգոր-
ծութիւն ունին : Քիչ մարդիկ կրնան խորհիլ-
թէ տղաք իրենց ամենափափուկ հասակին մէջ
կրնան այս մոլութեան ենթակայ լինիլ . բայց
մենք և անշուշտ շատ ուրիշներ համոզուած եմք
թէ, տղաք՝ երեք չորս տարեկան եղած ժա-
մանակնին անգամ կրնան գիճութեան սկսիլ,
թէև անշուշտ այս միջոցիս հոսումմը տեղի չու-
նենար, բայց այն հաճոյական զգացմունքը որ
իշխուն մէջ տեղի կ'ունենայ, կը հրապուրէ ման-
կիկը իւր ընթացքը շարունակել և տգիտաբար
ինքինքը եղձել. ուրեմն մեծ զգուշութիւն
պէտք է, որ ծնողք կամ ինտմածուք, ամենեւ-
սին չի խառնեն մանկանց ծննդական գործար-
անները . վասն զի ասանկով միայն շատ ան-
գամ տղաք գիճութեան մոլութեանը կ'ենթա-

կայանան : Երեք կամ չորս տարեկան տղեկի
մը դիճութիւնը խիստ մահառիթ ներգործու-
թիւն ունի . յիրաւի թէև այս միջոցիս մարմի-
նին ամենէն կենսական հեղուկը չի կորսուիր ,
սակայն շատ ուրիշ հիւանդութիւններ անշուշտ
յառաջ կուգան , մասնաւորապէս տղեկին ու-
ղեղը և ջիղերը եղծող հիւանդութիւններ :

Գիճութենէ յառաջ եկած հիւանդութիւն-
ներն շատ և ծանր են . . . ջղային դրութեան
սաստիկ գրգռումը և նոցա զօրութեան սպա-
ռումը այնպիսի ջղային վրդովում մը յառաջ կը
բերէ , որ մահ կը պատճառէ : Մօնթբելըր կը
հաստատէ թէ դիճութեան ուղեղի մէջ ըրած
ցնցողական բաղիսումներուն կրկնումները շատ
սննդամ մահառիթ են : Եւ Սր. Վիշենեան այս-
պէս կը խօսի այս մոլութեան վրայ իւր Ման-
կատածութիւն անուն ընտիր գրքին մէջ :
« Այս մոլութիւնը նախ մարմինը կը տկարացնէ ,
կը հիւանդացնէ ու մահ անդամ կը բերէ .
Երկրորդ՝ միտքը կը կուրացնէ ու գրեթէ ա-
տենէն առաջ կը ծերացնէ թէ մոքի թէ մարմ-
նոյ կողմէն » . 181-182 : Սակայն երբ այս ան-
վայել գրգռումը և նորա ճնշական հետեւան-
քը բնական մահուամբ չի վերջանար , տասնէն
իննին մուաւորական մահ կը պատճառէ , և
բոլոր իմացական կարողութիւններու խանգա-
րում . քանի քանի եօթը ութը տարեկան տը-
ղաքներ դիտած ունիմ ես , որոնք իրենց ծնո-
ղաց պատիւ և ցնծութիւն լինելու փոխանակ ,
այս վտանգաւոր սովորութեամբ՝ ապշութեան

դոհ եղած են . քանի քանի տղաքներ այս մուլութեան պատճառաւ նիհար , գունաթափ , զայրացեալ և տգեղ կերպարանք մը ստացած են . սոցա քունը կարծ , հիւծումնին երադ , և մահը անշուշտ է թէ որ չի դարմանուին : Զըղային արկածները ասկից յառաջ կուգան գըլխաւորաբար , ինչպէս ջղացաւութեան ստէպ , մասնաւոր կամ ամբողջ ցնցողական շարժումներ , լուսնոտութիւն , անդամալուծութիւն և անդամներու կծկումներ :

Այնի որ գիճութեան որս եղող տղան ամսւր կազմուածք մը ունենայ , և այս ամեն չարիքներէն աղատ մնայ , սակայն բնութիւնը անշուշտ իւր ժամանակէն շատ կանուխ պիտի արթննայ և սերմը պիտի սկսի հոսիլ . այս պարագայիս տակ ցանկութիւնը ինքզինքը կը յայտնէ , քանի որ գործարանները բոլորովին անյարմար են դեռ :

Սերմը հոսիլ սկսելուն պէս՝ բնականաբար հաճութիւնը կը բազմապատկի , և հետեւաբար սովորութիւնը կը հաստատուի , նմանապէս և գիճութիւնը աւելի ստէպ կը գործադրուի , և ահա անվայել գրգռման հետ գրութիւնը կ'սկսի ցամաքիլ մարմնոյ ամենակարեւոր և կենսական հեղուկին կորուստովը : Մարդկային կազմութեան վրայ տեղեկութիւն ունեցողները թէ և կը սոսկան այս մոլութենէն , և երկիւղով կը նային անկից գալիք հետեւանքներուն վրայ , սակայն անձնանուէր և խեղճ պատանին այս անդութ չաստուածուհին առ-

ջեւ դեռ կը ծնրադրէ , բոլորովին անհոգ և
աներկիւղ . նա չի կընար տեսնել այն խորսի-
րապը՝ որ իւր ոտքին տակ կեցած է , այն ըն-
դարձակ և ահագին անդնդախոր պարապումը՝
որոյ եղթին վրայ ինքը կը դողդղայ :

Բայց կան շատեր որ ան ժամանակ դիճու-
թեան կը սկսին , երբ իւրենց ծննդական գոր-
ծարանները այնպիսի կացութեան մը հասնին ,
որ ինքնին սկսին՝ բայց այս աւելի ցուրտ կը-
լիմաներու տակ տեղի կ'ունենայ՝ քան թէ
տաք : Տղաք այս մոլութեան գործադրութիւ-
նը երբեմն իւրեանց դպրոցի ընկերներէն կ'ու-
սանին , և մանաւանդ այնպիսի գիշերօթիկ
ուսումնարաններու մէջ , ուր մէկ քանի տղաք
մի և նոյն սենեակի մէջ կը պառկին . երբեմն
ալ դիպուածով կ'սկսի այս մոլութիւնը . ձի
հեծնալը շատ անգամ այս արդասաւորութիւնը
կունենայ , ծննդական գործարանները համե-
տին վրայ հաճելի շփում մը ունենալով . և եր-
բեմն ալ տղաք երեսի վրայ պառկելով այս մո-
լութեան պատճառներուն կը հանդիպին , վեր-
ջապէս այս կամ այն միջոցաւ տղաք ուշ կամ
կանուխ դիճութեան կ'սկսին . ուստի ամենա-
մեծ դգուշութիւն հարկաւոր է ծնողաց որ ի-
րենց ամեն ջանք ի գործ դնեն , իւրեանց
զաւկները կարելի եղածին չափ հեռու պահե-
լու բոլոր այն միջոցներէն , որոնցմէ մոլութեան
դրդիու մը կը յուսացուի :

Դիճութեան գործադրութիւնը չէ թէ միայն
պատանեաց և երիտասարդաց մէջ կը պատա-

հի և կը շարունակուի , այլ նաևս շատ անդամ չափահասս մարդիկ նորա գերի եղած են , և մինչեւ անդամ ամուսնացեալ անձինք : Յերաւի այս մոլութենէն աղատիլը շատ դժուար բան է՝ մինչեւ որ բոլորովին չի եղծուի այրական զօրութիւնը . « Եռեսուն կամ քառասուն տարեկան ամուսնացեալ մարդիկ տեսած եմ » , կ'ըսէ համբաւաւոր հեղինակ մը , որ բաւական անձնիշխանութիւն չունէին այս մոլութիւննին մէկդի գնելու , որոնք տարիներով իւրեանց կանանց հետ մերձաւորութիւն ըրած չունէին այս մոլութեան պատճառաւ » : Բենիամին անուն , մէկը կը յիշէ , բժիշկ խան , որ տաճն և վեց տարեկան հասակին , առանց դեռ կնկան մը հետ հաղորդակցութիւն ունենալու , դիպուածով դիճութեան սկսեր է , և տարիներէ ետքը թէ և ըրածին վտանգաւորութիւնը դիտէ եղեր , սակայն իւր մոլութիւնը չէ կրցեր թողաւլ . այս անձը քսան և մէկ տարեկան հասակին , իւր բարեկամաց թախանձանքէն համոզեալ , ամուսնացեր է դեղեցիկ և հրապուրիչ աղջկան մը հետ և միանդամայն թողեր է իւր մոլութիւնը , բայց աւաղ որ մարդկային որոշումները անհաստատ և յօյսերը անհիմն են . . . Բենիամին քանի մը ամիսէն վերջը իւր նախկին մոլութեանը սկսեր է , իւր ցանկական կերքը երկու կերպով 'ի գործ դնելով , և որոյ հետեւութիւնը եղեր է հիւանդ և տկար զաւկի մը ծնունդը , որն որ բարեբաղդաբար մեռեր է . . . բարեբաղդաբար , այս , վասն զի

այսպիսի զաւակի մը կեանքը , թէ ինքինքին
և թէ իւր շուրջը գտնուողներուն ցաւալի տե-
սարան մը պիտի լինի անշուշտ : Բենիամինի
կինը դարձեալ , զաւակ մը բերեր է , բայց
մեռած և պակաս . որոյ վրայ Բենիամին քիչ
մը խորհելով՝ անմիջապէս համոզուեր է թէ՝
ինքն է այս չարեաց կամ մարդասպանութեան
մի միայն պատճառը , ուստի այս անդամ իւր
մոլութիւնը թողելու կատարեալ որոշում մը ը-
րեր է , բայց այս միջոցէս քիչ մը ետքը հե-
ռու քաղաքի մը մէջ գտնուող իւր մէկ աղ-
դականը մեռնելով՝ հոն կ'երթայ և ահա
փորձութիւնը կը յարձակի նորա վրայ , կը
յաղթէ զայն և մոլութիւնը կ'սկսի . ժամանա-
կէ մը վերջը երբ ետ կը դառնայ , կը դտնէ
որ զուգաւորելու կարողութիւնը կորուսեր է ,
և միանդամայն իւր կինը անհնարին կը տագ-
նապի և կը թշուառանայ . Բենիամին կը կատ-
դի և կ'ուզէ ինքինքն սպաննել , բայց իւր
հրեշտակ կնկան աղերսանքները զինքը ետ կը
բռնեն իւր անմարդավայել որոշումէն , և կըս-
կըսի դարման վնտուել իւր թշուառութեանը .
շատ բժիշկներու ձեռք մնալէն վերջը բժիշկ
Խանին կը դրէ , և նորա հմտութեամբը վեր-
ջապէս կ'աղատի իւր աղետալի կացութենէն ;
ի մեծ մսիթարութիւն իւր հաւատարիմ կո-
ղակցին :


Հիմա խորհիլ օրինաւոր է , թէ՝ այսպիսի
մարդ մը իւր կնկանը աչքերուն ինչ տեսակ բան
մը կ'երեւայ , որոյ հետ մինչեւ կենաց վերջը

ապրիլ երդում ըրած է, և որոյ հետ անկարող է կատարելու ան պաշտօնը՝ որ բնութիւնը իւր սեռին գործադրել՝ և իւր կնկանը նոյն գործադրութեան սպասել տնօրինած է: Բենիամինի պէս օրինակներ գտնելը շատ դժուարին է, սակայն աւելի ցաւալի պատճառաւ մը, ինչու որ նոյն կացութեան ենթակայ եղողներէն շատերը ամուսնանալէ առաջ այրական զօրութիւն ունենալէ կը գագրին գրեթէ. թէև այս արգասիքն ալ շատ անգամ մարդ կոչուելու անարժան էակները չ'արգիլեր ամուսնանալէ և անմեղ կոյսերը թշուառ ընելէ. որոնք թէ որ գիտնան իրենց անմարդութեան պատճառը, անշուշտ ինքինքնին կ'ատեն:

Գիճութենէ յառաջ եկած չարիքները թէ որ մէկիկ մէկիկ համրելու ելնենք՝ մեծամեծ մատեաններ լեցընելու պիտի պարտաւորիմք, ուստի թողլով ամենքը, խօսիմք սերմնահոսութեան ախտին վրայ, որ մի միայն գիճութեան արգասիքն է, և որմէ յառաջ կուգայ անթիւ ուրիշ հիւանդութիւններ: Բայց նախ այս գլխուս մէջ համառօտիւ պարտիմ բացատրել ամորձիքի մէջ եղող ախտացեալ երակը որ յառաջ կուգայ գիճութենէ:

Մէկ գործարանի մը (հոգ չէ թէ մարմնոյ որ կողմ զետեղուած է) ստէպ և անկարեւոր գործողութիւնը, նոյն գործարանին մէջ շատ արիւն հոսել կը պատճառէ, որով և արեան երակները թէ դիրքով և թէ չափով կ'ընդարձակին. այս է ահա ամորձիքի մէջ տեղը ու-

A 1
6805



նեցած ախտաւորութիւնն ալ : Նոյն գործարա-
նաց շարունակական գրգռմամբը և գործողու-
թեամբը , և սերմնական հեղուկին շարունակ
լեցուելով և պարպուելով , երակները սոսկալի
կերպով կը տարածին և կը բազմանան , և մի-
անգամայն մաշկերնին կը հաստնայ : Երբեմն
աջ և երբեմն ձախ ամորձիքին վերնամաշկը ,
և երբեմն երկուքինն ալ 'ի միասին կ'երկըն-
նայ , ծալքերը կ'աներեւութանան , և բոլոր
գործարանը կը կախուի . և երբեմն ալ ամոր-
ձիքը բոլորովին կ'անհետանայ որ շատ ան-
դամ անբուժելի է :

Եկեղեցականի մը ղաւակը կար՝ նիհար ,
գունաթափ և տղեղ . ասիկայ տասը տարեկան
հասակին օկսեր է գիճութեան , իսկ այս մո-
լութեան պատճառ եղեր է իւր ծառի մը վրայ
ելած ժամանակը արտադրական անդամներուն
զգացած հաճութիւնը . այս թշուառ երիտա-
սարդը տարիներով այս մոլութիւնը շարունա-
կելով վերջապէս կ'սկսի իւր կազմութիւնը
եղծուիլ , դոյնը կը նետէ , կերակուր ուտելու
ախորժակը կը տկարանայ , գլխուն ետեւի կող-
մերը կ'սկսին սաստիկ ցաւիլ , նմանապէս ա-
մորձիքները և երիկամունքները . իսկ սերմնա-
կան հոսումը յաճախ տեղի ունենալով՝ կ'սկսի
գերեղմանին մօտենալ . իւր բարեկամները կը
շփոթին իւր կերպարանքէն , տանը բժիշկը կը
կանչուի , որն որ խել մը անկարեւոր դեղեր
կ'սկսի տալ , հիւանդութիւնը չի կընալ ճանչ-
նալուն համար . բայց ամեն ջունքը ընտրմա-

բար անօդուտ կ'ելնէ . . . հիւանդութեան բուն
արմատը չի կընար գտնել բժիշկը : Տղան կըս-
կըսի կասկածիլ, սակայն չի համարձակիր մէ-
կու մը յայտնել, վասն զի ընկերութեան ամե-
նէն առաջին հրամանն է չի խօսիլ արտադրա-
կան գործարանաց վրայ ամենեւին . . . Ուստի
օրէ որ կը գէշնայ, բժիշկը ուսերը կը թոփուէ
և ամեն մարդ իրմէ յոյսերնին կը կտրեն : Վեր-
ջապէս երիտասարդը մեծ փոփոխութիւն մը
կը նշմարէ իւր ծննդական գործարաններուն
վրայ, կը տեսնէ որ վերնամաշկը կախուած,
և ձախ ամորձիքը աներեւութացեր է՝ տեղը
խել մը հաստ թելեր մնալով . խեղճը ասոնք
տեսնելով ալ տարակոյսը չի մնար, և վարպետ
բժիշկի մը խնամքովը շուտով կ'աղէկնայ, և
քիչ ժամանակէն ալ գեղեցիկ և վայելուչ աղ-
ջըկանմը հետ կ'ամուսնանայ : Այս երիտասար-
դը իւր հիւանդութեան միջոցին կը խօսէր ար-
տասուելով . « ահ թէ որ իմ հայրս և կամ թէ
ուրիշ մը, ինձ հետ խօսակցէր դիճութեան
ղարհուրելի հետեւանքներուն վրայ, երբ ես
պատանի մ'էի, զիս բոլոր այս ցաւերէն պիտի
փրկէր, բայց եղուկ որ սովորութիւնը արդիւած
էր անոր վրայ խօսիլ, որով և ես Աստուծոյ
և իմ կաղմութեանս դէմ մեղանչեցի կատար-
եալ տգիտութեամբ . . . անիծեալ սովորութիւն .
արդեօք քանի քանիներու կենաց դահիճն ե-
ղած ես »: Այս երիտասարդին համառօտ պատ-
մութիւնը մեղի երկու բան կ'ուսուցանէ . նախ՝
այս ուրիշութեամբ դեռ մեռ մեռ դէմ դահճաւելուն

վտանգաւորութիւնը . երկրորդ՝ թէ որքան
կարեւորութիւն կայ պատանեաց ուսուցանել
ծննդական գործարանաց փափկութիւնը , և
նոյս ևնթակայ եղած հիւանդութիւնները ա-
պօրինաւոր գործածութեամբ :



ԳԼՈՒԽ Գ.

ՍԵՐՄՆԱՀՈՍՈՒԹԻՒՆ

—

“ Ճաղիւ թէ իմացաց թէ կ'ազրիմ ես , երբ
ահա գտայ որ մահը արդէն զիս բռնած է ” :
ՄԻԼՅԱՆ

Գիճութեան ամենէն սովորական և անհրա-
ժեշտ արգասիքը սերմնահոսութիւն կոչուած
ախտն է , և ամենեւին հնարաւորութիւն չի կայ
մարդու մը համար որ գիճութիւնը շարունակէ
և այս ախտէն ազատ մնայ : Բայց այս ըսածէս
հետեւցնելու չէ թէ սերմնահոսութիւնը միշտ
գիճութեան արգասիքն է , վասն զի կան շատ
ուրիշ պատճառներ ալ որ այս ախտին ծնունդ-
կուտան , և մինչեւ անդամ ժառանդական ալ
կը լինի : « Սերմնարարը , կ'ըսէ Լալէմանտ , ան-
բնական գրդուման ազդեցութեան տակ ինք-
զինքը կծկտելու բնութիւնը կ'ստանայ . այս-
պիսի պարագայից տակ փամփուշտը լեցուն պա-

հելլ , տաք և կակուղ անկողնոյ մէջ և կռնա-
կի վրայ պառկիլը , ջերմ և ոդելից ըմպելիք-
ներ գործածելը ևայլն՝ հոսումը աւելի կը
դիւրացնեն , և ահա այս կացութեան մէջ է
որ սերմնարարին և ուղեղին մէջ տեղը եղած
փոխադարձ կապակցութիւնը հեշտական ե-
րազներ կ'արգասաւորէ » : Սերմնահոսութեան
ախտին պատճառ կրնան լինիլ նաեւս հետեւ-
եալները . Տեռատեսութիւն , երկայն ծայր
մաշկ ունենալ , ծայր մաշկին տակը աղտոտ
պահել , ոդելից ըմպելիք շատ դործածել ,
միզանցքաբորբոքում և հեշտական շռայլու-
թիւն . բայց ասոնց ամենէն աւելին գիճութիւ-
նըն է դվիսաւոր պատճառ սերմնահոսութեան :

Պէտք է գիտնալ թէ սերմնական հեղուկը
սերմնարարին մէջ կը պատրաստուի , և թէ
փոքրիկ խողովակներ կը բացուին ասոնց միա-
ւորութենէն սերմնատուին հետ ի միասին մի-
զանցքին մէջ , և թէ այս խողովակներուն մի-
ջոցաւ սերմը կը փախչի . արդ առողջ մարդուն
այս խողովակները գոյ են , և սերմը ամենեւին
չի կրնար գուրս ելնել , մինչեւ որ բնութեան
մզմամը զուդաւորութեան բնական գործո-
ղութիւնը կատարուի . բայց երբոր ասոնք տըռ-
փական շռայլութեամբ կը տկարանան , կամ
թէ գիճութեամբ ընդարձակութիւն կ'ստանան
ամենաթեթեւ շարժառիթ մը բաւական կը
լինի նոցա սերմը գուրս տալու , անշուշտ սեր-
մը չի կատարելագործուած , մինչեւ անդամ
փամփուշտին միզով լեցուելէն վերջը կրած

կծկումը բաւական կը լինի , և ընդհանրապէս այսպիսի մէկու մը միզին վերջին կաթիլները թէ որ քննուին , մէջը սերմ պիտի տեսնուի : Եթէ այս տկարութիւնը և ընդարձակութիւնը շարունակուի , ալ շարժառիթի մը կարեւորութիւն չի մնար սերմը դուրս տալու , ըստ որում ալ սերմը ինքնին կը հոսի և անօթին մէջ ամենեւին չի կրնար կենալ , այլ դոյանալուն պէս՝ կամ միզանցքէն մեծ քանակութեամբ կը հոսի , կամ թէ յետ 'ի փամիտւշտն դառնալով՝ միզին հետ կ'ելնէ :

Ինչպէս որ կաթը և անոր նման ուրիշ բաներ , նոյնպէս ալ սերմնական հեղուկը արիւնէն կը զտուի , բայց որովհետեւ ասիկայ միւսներէն աւելի արեան կարօտ է , հետեւաբար իւր կենդանականութիւնն ալ աւելի է . և յիրաւի ըստուգուած է որ սերմնական հեղուկին կենդանականութիւնը արիւնին կենդանականութենէն քսան անդամ աւելի է , և հետեւաբար տասն և վեց տրամ սերմհեղուկ կորսնցնող մը երեք հարիւր քսան տրամ արիւն կորսնցուցած կը լինի : Այս փոքրիկ հաշիւը կրնայ համողել իմ սիրելի ընթերցողներս , գիճութեան զարհուրելի վըտանգներուն նկատմամբ :

Ծննդական դործարաններուն աղէկ վիճակին մէջ սերմնական հեղուկը շարունակ կը դոյանայ և կ'ամբարուի սերմնարանին մէջ՝ կանոնաւոր միջոցաւ անկից դուրս ելնելու համար , բայց այս հեղուկին կերպաւորութիւնը ամեն ուրիշ հեղուկներուն նման ջղային դրութեան

իշխանութեան ներքեւ է , և հետեւաբար իւր գոյացումը առատ կը լինի , երբ միտքը շարունակ տուփական զդացմանց և ցանկական կրից վրայ մտածէ , և այսպէս՝ եթէ հոսումը յաճախ տեղի ունենայ աւելի առատ պիտի սկսի դոյանալ , և մարմինին մնացեալ դործարաններուն տկարութիւն պատճառել . Մարդկային կազմութեան օրէնքներուն վրայ քիչ մը գաղափար ունեցողը չի կրնար առանց զարհուրելու նայիլ այնպիսի անձի մը վրայ՝ որուն ցանկական կրից իշխողական ընթացքը բոլոր մարմնոյն համար դործածելի արիւնը՝ մի միայն իւր գրգռեալ մէկ անդամին միջոցաւ սպառելու վրայ է :

Սերմնահոսութեան մէկ տեսակին ալ գիշերը տուփոտ երազներով սերմնական հեղուկին քունի մէջ հոսիլն է . և մարդիկ ընդհանրապէս երեւակայական նկարներու կ'ընծայեն այս իրողութիւնը , բայց ինչպէս կ'ըսէ Լալէմանտ , « հեշտական նկարները որ քունի մէջ կ'երեւան , ծննդական դործարանաց գրգռումէն յառաջ կու գան » : Պարոն մը որ գիճութեան անվայել սովորութեան տէր է եղեր , և վերջը իւր ըրածին վտանգաւորութեանը տեղեակ լինելով թողեր է իւր սովորութիւնը , սկսեր է ամեն գիշեր գեղեցիկ աղջկան մը հետ զուգաւորիլ երազին մէջ , և ասանկով այնքան տկարացեր է , որ բժիշկ խանի դիմեր է և նորա խնամատարութեամբը աղէկցեր է . այս պարոնին մէկ ամործիքին մէջի սերմնարարը անյայտ է

եղեր, արանդամը վոքրացեր և երագ խողովակները եղծուեր են, բայց Խան զինքը դարմանելով ամենայնիւ աղէկցեր է :

Սերմնահոսութիւն ունեցող անձանց ոմանքը ալ նստած կամ շրջած ատեննին կ'զգան սերմնական հեղուկին փախչիլը, առանց ամենեւին հաճութիւն մը կամ արանդամին կանդնում պատճառելու :

Սերմնահոսութեան ախտին ամենէն գէշտեսակը սերմին նախ փամփուշտին երթալը և միզով միատեղ դալն է, ըստ որում ասանկով հիւանդութիւնը տարիներով կը շարունակուի, և հիւանդը չիմանար և չի գիտեր թէ իւր տըկարութեանը պատճառն ի՞նչ է :

Զաւակ չունեցող ազնուական մը կար, որոյ սերմը քննուելով՝ դտնուեցաւ որ սերմնահոսութիւն ունի. վարպետ բժիշկ մը զանի դարմանելով աղէկցուց, և քիչ մը ետքը գեղեցիկ զաւակի մը տէր եղաւ :

Սերմնահոսութեան ախտը ունեցողներուն սերմնորդերը կոտրտած կը լինին :

Երիտասարդ մը քսան և մէկ տարեկան կարդուեր է, և երեք զաւակի տէր լինելէն վերջը, զաւակներուն երկուքը և կինը մեռեր են. քիչ մը անցնելէն վերջը այս պարոնը նորէն կարդուեր է գեղեցիկ կնկան մը հետ, սակայն որքան վշտացեր է՝ երբ նորա հետ զուդաւորիլ չէ կրցեր, օրեր ամիսներ անցեր է և դեռ այս դժբաղդութեան վերջ մը չէ կրցեր տալ. իսկ կինը սկսեր է պաղ աչօք նայիլ անոր վրայ. բայց

բարեբաղդաբար խելացի բարեկամի մը խրա-
տին մտիկ ընելով ինքզինքը բժիշկի ցուցուցեր,
դարմանուեր և աղէկցեր է . այս պարոնին
զուգաւորելու անկարող լինելուն պատճառը
իւր առջի կնկան մահուանէն ետքը ըրած դի-
ճութիւնն էր :

Զուգաւորելու անկարող լինելը յիրաւի կար-
դուած մարդու մը համար ամենամեծ յանցանք
է , վասն դի կին մը ի՞նչ աչքով կրնայ նայիլ
այնպիսի մարդու մը երեսը որ բնութեան իրեն
պարդեւած ամենէն մեծ երջանկութիւնը իրեն
չի կրնար մատակարարել . արժան է հոս մեր
ընթերցողաց առջեւը դնել Սըր Ասդլէյ Քուրի
մէկ համառօտ խորհրդածութիւնը : « Այսպիսի
մարդու մը կրնայ Աստղիկ իւր հրապոյներովը
մերձենալ առանց ազդեցութեան այսպիսի մար-
դու մը քով չի գտնուիր կենդանի ազրիւը եր-
ջանկութեան և կենսական հովն դարնան : Այլ
այնպիսին տիսուր , ապուշ , սարսոիչ ձմեռ մըն
է՝ որոյ մէջ կենաց առուակը սառած է և կեն-
դանական յատկութիւնները կործանած » :

Բժշկականութեան հռչակաւոր հեղինակ մը
այսպէս կ'ըսէ . « Զուգաւորելու անկարողու-
թիւնը էրիկ մարդոց մէջ աւելի կը պատահի
քան թէ կանանց , ինչու որ էրիկ մարդուն
վրայ է զուգաւորութեան մեծ պաշտօնը » :

Սերմնահոսութեան ախտի հանդպողներուն
քսանէն տասն և ինը կրնան աղէկնալ . իսկ
զուգաւորելու անկարող եղողները յիրաւի շատ
մեծ հիւանդութեան մը տէր պարտին սեպել

ինքզինքնին : Խորիմի վերջին պատերազմին մէջ անգղիացի զինուոր մը վիրաւորուելով կորսընցուց իւր ամորձիքները . ասի աղէկնալէն վերջը ամեն տեսակ զուարճաբանութեամբ ինքզինքը կը մխիթարէր և բնաւ հոգ չէր ըներ . բայց երբ Անգղիա դնաց և նետուեցաւ իրեն սպասող ամուսնոյ մը բազկացը մէջ , ան ատենը զգաց իւր կացութեան դժնդակութիւնը , և քիչ օրերէն վերջը ինքզինքն սպաննեց : Քանի հազարաւորներ կան արդեօք այս դժբաղդութեան ենթակայ եղող . երեւակայեմք թէ մարդ մը որ զուգաւորելու անկարող է . որքան մխիթարութիւն և երջանկութիւն կրնայ վայելել մարդկային ընկերութեան մէջ . որքան զարհուրելի կերպով արդեօք այսպիսի մէկու մը խղճմուանքը պիտի տանջէ զինքը , երբ խորհի թէ ինքը իւր բուն ձեռքերովը զրկած է ինքզինքը աշխարհիս ամենէն մեծ մէկ երջանկութենէն :

Թող ամեն երիտասարդ լաւ նկատում ընէ հետեւեալ պատճառներու և արդիւնքներու երկիւղալից դիտողութիւններուս . Գիտութիւնը՝ աւրմաններիւն . աւրմաններիւն՝ շուրջուրելու անհրաժեշտութիւնը . շուրջուրելու անհրաժեշտութիւնը՝ շուրջուրելու անհրաժեշտութիւնը . և շուրջուրելու անհրաժեշտութիւնը՝ անյնուողանութիւնը կը դուռնալ :



ԳԼՈՒԽ Դ.

ՄԻԶԱՆՑՔԱԲՈՐԲՈՒԺՈՒՄՆ

ԵՒ ՄԱՇԱԿԱԿԱՆ ԱԽՏ

—

“Միայն խաղողին հիւթը չէ որ մարդուս
բարսյականութիւնը կը կործանէ , այլ փա-
ռամունութիւնը , արծաթսիրութիւնը և գե-
ղցիկ կիներն ալ նցնը կ'արգասաւորեն ու :

ՔՕՐԸՐ

**Ապօրինաւոր զուգաւորութիւններէ յա-
ռաջ եկած հիւանդութեանց տռվական ախտք
անունը կուտամք :**

Շատ բժիշկներ եղած են , որ միզանցքա-
բորբոքումը և մաշողական ախտը , մի և նոյն
տեսակ ախտ սեպած են . բայց իրողութիւնը
այսպէս չէ , ինչպէս որ վարը պիտի յայտնեմք :

Տռվական հիւանդութեանց սկզբնաւորու-
թիւնը դադտնութեան մէջ թաղուած է , և
շատ հեղինակներու այս նիւթիս վրայ ըրած
ջանքերնին ամենն ալ ընդունայն ելած են :
Եղան ոմանք որ ըսին թէ Ամերիկայէն Եւրոպա
անցաւ Քօլօմպոսի ժամանակ , բայց այս ըսող-
ները , Ռիքօրտի ըսածին պէս , չի խորհեցան
թէ ի՞նչ պատասխանելու են , երբ Ամերիկայի
բնիկները հարցնեն թէ՝ «Մենք ուսկից ա-
ռինք » (*) :

(*) Կընամք հաւատալ թէ այս հիւանդութիւնը

Այս հիւանդութեանց հնութիւնն անուրանալի է, և Սուրբ գրոց մէջ այնպիսի ախտ մը կը յիշուի, որ շատ կը նմանի միզանցքաբորբոքման. (Ղու. ԺԵ. ԳԼ.) Ռւրիշ տեղեր ալ մաշողականը յիշուած է, թէ և ոչ անուամբ. (Ղու. ԺԴ. ԳԼ. 2 հմբ.) Հիւփոկրատ կը խօսի ծննդական գործարանաց վէրքերու վրայ. Կալէն՝ Պլէնօրակիայի փոխադրական հիւանդութիւն ունեցող աղդ մը կը յիշատակէ. և կէլսիւս ծննդական գործարանաց ենթակայ եղած հի-

հարկաւ սաստիկ տաք երկրներու մէջ բնակող ժողովրդոց մէջ ծագումն առած է, վասն զի խիստ տաք երկիրներու օդը այնպիսի հանգամանք մը ունի որ արեան անմաքրութեան և մարմնոյ զանազան վէրքեր կը պատճառէ, մանաւանդ անթլիատ և ամեն օր ջրով չլուացւող ժողովրդոց մէջ. ուստի ասկից յայտնի կերեւնայ որ այս հիւանդութիւնը այնպիսի ժողովրդոց մէջ առաջին անդամ տեսնուած է, որոնք տաք կլիմայից մէջ գտնուելով հոգ տարած չեն իւրեանց մաքրութեանը, և տուփական հեշտութեան անձնատուր ընթացքով մը կատաղութիւն և բորբոքում տուած են իւրեանց ծննդական գործարանաց վրայ զտնուած վէրքերուն, և յետոյ խնամութիւններ ընելով ուրիշ ազգաց հետ, նոցա ալ հաղորդած են իրենց ախտերը, և ասանկով՝ այս ախտը ճարտկած է ամբողջ մարդկային ազգին մէջ: Մեր այս ըսածը աւելի կը հաստատուի եթէ յիշենք թէ ո՞րքան խնամք կը տանէր Մովսէս որ նախ անթլիատ և անմաքրուր Նրէայ չիմնայ, և երկրորդ խնամութիւն չ'ընեն անթլիմտ և անմաքուր ազգաց հետ:

ւանդութեանց վրայ կը խօսի . Յոյնք , Ափրի-
կեցիք և Հռովմայի բժիշկները այս հիւանդու-
թեանց վրայ խօսած են . և շիտակը շատ հա-
ւանական է որ այս հիւանդութիւնները ամեն
ժամանակ և ամեն երկրի մէջ կային . . . Ուր որ
զուգաւորութիւն կայ՝ հոն և տոփական հի-
ւանդութիւն անպակաս է , և վօլթէր ճշմա-
րիտ խօսեցաւ , ըսելով թէ՝ «Մաշղղական ախ-
տը և գեղեցիկ արհեստները միատեղ յառաջ
կ'երթան , բայց ոչ դիտէ թէ ուսկից սկզբնա-
ւորութիւն առին :

ՄԻԶԱՆՑՔԱԲՈՐԲՈՒԹԻՄՆ : Այս ախտը մաս-
նաւոր թոյնի մը արգասիքը չէ , և թէ և այս
ախտը ապօրինաւոր զուգաւորութեամբ կը-
տացուի , բայց միշտ այսպէս չէ իրողութիւնը .
վասն զի այս ախտը կրնայ շատ ուրիշ արտա-
քին պատճառներով ալ դալ . որոնք մի առ մի
հոս յիշելու ժամանակ չունիմք , բայց միայն
այսչափս ըսինք որ վերջ մը տրուի այն անհա-
մար այր և կնկան մէջ եղած կուիւներուն , որ
այս ախտին պատճառաւ կը լինին . խեղճ էրի-
կը չի գործած յանցանքի մը տէր կը սեպուի ,
և իւր տդէտ կնկանը ատելութեանը ենթակայ
մը կը լինի :

Միղանցքաբորբոքման առաջին նշաններն են
միղանցքին մածուցիկ բաղմաթելին մարմաջու-
մը , գրգռումը և տաքութիւնը . որոնց մէ քիչ
մը ետքը հոսումը կը տեսնուի . որուն գոյնը ,
սերտութիւնը և հոտը՝ ախտին աստիճանին և
ուրիշ պարագայներու նայելով՝ կերպ կերպ կը

լինին : Ընդհանրապէս երբ հոսումը առաջին
անգամ կ'երեւայ , բարակ , ճերմակ և ջրային
հեղուկէ մը կը բաղկանայ , որ պարզ մածու-
ցիկ է . բայց շուտ մը կը փոխուի գոյնը և կը
լինի գեղնագոյն և այս վիճակիս մէջ կը մնայ
ատեն մը թէ որ չի դադարի հոսելէ , ետքը
դարձեալ կը փոխուի գոյնը՝ կը լինի ջրագոյն
և ջրոտ , և տարիներավ այսպէս կրնայ մնալ ,
որ միշտ վտանգաւոր արգասիք մը կը բերէ
մարդկային ընդհանուր շէնքին . (Տե՛ ԶԵ՛ 1 և 8) :

Այս հիւանդութեան սկզբնաւորութեան մի-
ջոցին դարմանելլը շատ դիւրին է և անվնաս ,
բայց քանի հիննայ՝ այնքան դժուար կը լինի
առողջանալլ :

ՄԱՇՈՂԱԿԱՆ ԱԽՏ . Աս ախտը մասնաւոր թոյ-
նի մը արգասիքն է , թէ և այս թոյնին բնու-
թիւնը դեռ գիտցուած չէ , ըստ որում « անոր
գործող սկզբունքը դատ և որոշ կերպարանքով
յայտնուած չէ դեռ » : Խակ մեր բոլոր գիտցա-
ծը սա է թէ՝ այս թոյնին ախտաժէտ գործո-
ղութիւնը մէկ տեսակ մը կենդանական ժան-
տութենէ կը բաղկանայ տարբեր յատկութեամբ
և ներգործութեամբ , և որն որ երբ կենդանի
մարմինի մը դպչուի՝ մէկէն նոյն մարմնոյն բո-
լոր առողջութիւնը կ'եղծէ , և այնպիսի վէրք
մը կը պատճառէ , որմէ իրեն նման թոյն կ'առ-
նուի : Մաշողական ախտը ամենեւին ինքնիրեն
չի պատահիր , այլ միշտ ուրիշ մարդէ մը կը փո-
խադրուի , թէ զուգաւորութեամբ և թէ որ և
իցէ ուրիշ կերպով էլք . մոշչողուկան տիւտ ունե-

ցողին խմած գաւաթը , ծխած ծխպամորջը
և այլն , իրեն չափ վտանգաւոր են առողջ մարդ-
կանց համար :

Մաշողական ախտը իւր բնութեանը համա-
ձայն Քանկը անունն ունի :

Մաշողական ախտին և միզանցքաբորբոք-
ման մէջ եղած մեծ տարբերութիւնը Ծիգօրտ
գտաւ վերջապէս՝ թէ մաշողական վէրքին թոյ-
նը՝ և թէ միզանցքաբորբոքման հոսումը առ-
նելով և փորձելով . առջինը միշտ նոր վէրք մը
կը բանար , իսկ Երկրորդը՝ ամենեւին բան մը
չէր ըներ . ուստի մէկ Քանկը մը միշտ ուրիշ
Քանկը մը յառաջ կու գայ , և մաշողական ախտ
ունեցող մը անսպատճառ ուրիշ մաշողական ախտ
ունեցողէ մը առած է : Մարդուս այս հիւան-
դութեան քիչ կամ շատ ենթակայ լինելը իւր
կազմութեան զօրութեանը վրայ կայացած է .
իսկ զուգաւորութեան մէջ Երկայն ծայր մաշկ
ունեցողները աւելի ենթակայ են այս հիւան-
դութեան . (Տէ- Ձէ- 10) , և յիրաւի շատ ան-
գամ պատահած է որ մի և նոյն կնկան հետ
զուգաւորութիւն ընող մարդիկներէն մէկը ախ-
տը առեր է և միւսը չէ առեր , առջինին ծայր
մաշկը կամ կարճ և կամ թլիատուած լինելուն
համար (*) :

(*) Նկատելու արժանի կէտ մի է որ գրեթէ ա-
մեն կրօնապետ թլիատութիւնը ընդունած և պաշտ-
սպանած են , և Քրիստոնէութիւնը այս օգտակար
սովորութեան դէմ բան մը ըստու չունի . իսկ արդի

Մաշողական ախտին առաջին նշանը մարմա-
ջումն է, ասի ցաւի կը փոխուի, և ետքը սաս-
տիկ ցաւեր կուգան, և ասոնցմէ վերջը բոր-
բոքում տեղի կ'ունենայ, և ահա մէկ փոքրիկ
պալար մը երեւան կ'ելնէ թոյնով լեցուն, և պա-
տառելով խել մը խածատիչ վէրքեր կը պատ-
ճառէ. այս վէրքերուն հանգամանքն է, բոր-
բոքեալ, եզրերնին անհարթ, արմատնին կարծը
և առողջանալու չզիջանող լինիլ. (Տե՛ Ա- 2 և 3):

Մաշողական վէրքը զուգաւորութենէն մէկ
երկու օր վերջը կրնայ յայտնուիլ, բայց երբեմն
ալ երկու ամիսէն ետքը կը յայտնուի: Այս վէր-
քը զարհութելի կերպով վտանգաւոր է, թէ որ

իմաստասէրք շատ լաւ համոզուած են թլիատու-
թեան կարեւորութեանը, և ես այնպէս կը հաւա-
տամ թէ՝ որ և իցէ ազգ մը որ թլիատութեան սո-
վորութիւնը ունի և անթլիատներու հետ տուփա-
կան յարաբերութիւն չունենար՝ ծննդական գործա-
րանաց ենթակայ եղած շատ մը կենազրաւ հիւան-
դութիւններէ աղատ կը մնայ, և հետեւաբար եթէ
ամեն ազգ թլիատութեան սովորութիւնը ընդունին
և 'ի դործ դնեն, տուփական հիւանդութեանց առ-
ջեւը առնելու համար հարկ եղած ամենէն գլխաւոր
մէջոցը ձեռք առած կը լինին. որքան երջանիկ պի-
տի լինէր մարդկային սեռը թէ որ ամեն ազգ 'ի
վաղուց անտի թլիատութեան և ամեն օր պարզ
ջրով լուացուելու սովորութիւնը ունենային, որով
հարկաւ այսօր ընդհանուր մարդկային չէնքին կոր-
ծանում սպառնացող տուփական և ուրիշ այլ և այլ
հիւանդութիւններ չի պիտի գոյանային:

սկզբնաւորութեան միջոցին առջեւը չ'առնուի .
(Տե՛ Զե՛ 9) :

Մաշողական ախտէն յառաջ եկած չարիքները և հիւանդութիւնները անհամար են . այս ախտը մարդուս բոլոր կազմութիւնը կը թունաւորէ , երկուորիք , աչք , ականչ , բերան , քիթ , կոկորդ , ոտք և այլն , ամենն ալ կը փըտին ու կը թափիթփին . և ամենագեղեցիկ մարդ մը բնութեան հրէշի մը չափ տգեղ կ'ընեն . (Տե՛ Զե՛ 4, 5, 6, 7, 11) : Բայց այս չէ ամենը . Մաշողական ախտին ձեռքն ինկնող և անմիջական դարմաններով չի լաւցած մարդը՝ մարդկային ընկերութեան մէջ շրջող կենդանի ժանտախտ մը լինելէն 'ի զատ , հարիւրամեայ ձերունի մի է գերեզմանին եզրը դողդղացող . (Տե՛ Զե՛ 12) :

Գլուխո Ե .

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ ԱԼ

—

Վ այ ան մարդուն որ միանգամայն տըռ-
փական հիւանդութեանց մէկուն ձեռքը որո
կ'իյնայ , իսկ հաղարապատիկ վսից ան մարդուն՝
որ տռփական հիւանդութիւններուն մէկուն
ձեռքն իյնալէն վերջը ինքզինքը դարմանելու
չի շտապիր , և հմուտ բժշկի մը ձեռք ինքզին-
քը յանձնելու տեղ , առաջին անգամ առջեւը

ելնողին կը յանձնէ ինքզինք , առանց խորհելու թէ , որ և իցէ հիւանդ մը աւելի լաւ է կատաղի վագրի մը առջեւ ձգուի՝ քան թէ անփորձ բժշկի մը ձեռք . վասն զի շատ ճշշմարիս խօսած կը լինիմք՝ թէ որ ըսեմք թէ մարդկային ընկերութիւնը սպաննողներն , հիւանդութիւններէն և պատերազմներէն աւելի , ոգէտ բժիշկներն են :

Ուստի , իմ սիրելի ընթերցողս , ես քեզի ամեն բանէ առաջ կը խրատեմ որ քու ցանկութեանդ սահման դնես . թէ որ գիճութեան աշակերտ մի ես՝ այս վայրկեանէն թողուս այդ զարհուրելի սովորութիւնը . հեռացիր , կ'աղաւեմ , այդ մոլութենէն , կատաղի ցուլի մը առջեւէն փախչելու պէս . մեղքցիր ինքինքն և մարդկային ընկերութիւնը , և թող որ իմ այս համառօտ յորդորս և կամ թէ աղաչանքս շարժէ քու սիրտդ : Եւ թէ որ քու սոսուըներդ սովորեր են յաճախելու այն անառակութեան տուները՝ լսէ ինձ և համոզուէ որ ան տուները դերեզմաններէ աւելի երկիւղալից վիրապներ են , ուր ճիւաղք ամենադեղեցիկ կերպարանքներով և յափշտակեցուցիչ հրապոյրներով կ'սպաննեն իրենց ձեռքն ինկնող խեղճ և ողորմելի երիտասարդները . ահ , քանի քանիներու հանդիպած եմ ես , որոնք գլուխներնուն մազերը փետտելով կ'անիծեն այն ժամը՝ երբ առաջին անդամ իրենց ոտքը կոխած է այն տուներէն մէկուն դռնէն ներս : Մի խարոիք , երիտասարդներ , անառակ կիները ձեր կարծածին

շափ գեղեցիկ և մաքուր չեն, և ճշմարիտ կ'ը-
սեմ որ եթէ անոնցմէ մէկը (թէ եւ ամենէն դե-
ղեցիկը լինի) լոյսի մէջ քննես և քու վնասուած
երջանկութեանդ աղբիւրը տեսնես՝ պիտի սոս-
կաս, զզուիս և երդմամբ պիտի հեռանաս այն
կարծեցեալ հրեշտակէն : Եթէ բնութեան մէջ
ամենազզուելի բան մը կայ՝ ան ալ անառակ
կինն է, որ իւր պղծութեամբ աղտոտած ամ-
բարիշտ մարմնոյն վրայ կը դրկէ որ և իցէ մէ-
կը որ իրեն կու գայ :

Հոս խօսքերնիս կը վերջացնենք՝ թողլով որ
քիչ մըն ալ Հայազգի բժիշկ Անդրէաս Փոփո-
վիք խօսի :

« Ովկ որ բնական ցանկութիւնը կատարելու
ատենը բնութեան օրէնքներուն և կանոններուն
չի հետեւիր, ովկ որ կանուխ ու այնչափ հեշ-
տութիւններով մարմինը կատարեալ հասունու-
թեան հասնելու չի թողուր, անանկ որ ա-
րեւին սաստիկ տաքէն երած տունկի մը պէս
կը թոռմի, վերջապէս ովկ որ բնական ցանկու-
թեան վախճանին կամ նպատակին դէմ կը դոր-
ձէ ու ճամբայ կը բռնէ, նոյն ցանկութիւնը
կատարելու ատենը՝ ծննդեան ու մարդկային
աղգին շատնալուն արդելք կը դնէ, որ իր
մարդկութիւնը անքնական գիճութիւնով և ու-
րիշ բնութեան դէմ ըլլող անասնական ու ալ
աւելի դէշ մեղքերով կ'արհամարհէ, ան մար-
դը իրաւցընէ մնի ու բղջախոհ կ'ըսուի : Թէ
որ մարդասպանութիւնը ու գողութիւնը մոլու-
թիւն է՝ պէտք է որ բղջախոհութիւնն ալ մո-

լութիւն ըլլայ , ինչու որ բղջախոհութենէ աւելի բնաւ բան մ'ալ մարդուն բարոյական վախճանին դէմ չի կրնար ըլլալ . ասկից 'ի զատ բան մ'ալ անիկայ ամեն աղէկ դործքերու և բարի բարի վայելմունքներ ունենալու անյարմար ու անընդունակ չի կրնար ընել . ու մարդկային բնութեան կամ մարդկութեան ներքին ծուծը ապականել ու չորցընել . թէ որ մարդ իր ուրիշ մարմնաւոր կարօտութիւնները կատարելու մէջ սահմանուած չափն ու կարգը անցնելու , և աշխարհքիս վըրայ ուտելէն , խմելէն ու քնանալէն ուրիշ բան չընելու , չի գիտնալու և չի խօսելու ըլլայ , ուրիշ մարդկան առջին ողորմելի ստեղծուածի մը պէս արհամարհելի կ'ըլլայ , հապա ինչչափ աւելի արհամարհելի պէտք է ըլլալ ան մարդը , որ միայն անանկ վայելմունքի մը ետեւէ կը վաղէ՝ որ մարդկային բնութեան այնչափ հարկաւոր չէ , ինչպէս ուտել խմել քնանալը , և որուն մէջը եղած չափազանցութիւնը մարդուն ուժին ու պատւոյն՝ ուտելու խմելու ու քնանալու մէջ եղած չափազանցութենէն չատ աւելի մնաս կ'ընէ . դարձեալ կ'ըսեմ , ինչչափ աւելի արհամարհելի պէտք է ըլլալ ան մարդը՝ որ միայն մարմնաւոր հեշտութեան վրայ կը խօսի , միայն անոր վրայ կ'երաղէ ու կը մտմտայ , ու իր բոլոր կենացը ուժն ու ամեն հոգեղէն զօրութիւնները մինակ աս առանձիւ յօժարութեան ու դրդիոխին վրայով կը պտըտին ու կըզբաղին : Առանձ վայրկենական հեշ-

Դաստիարակության գդացմունքէ մը գրգռուելով կը գործէ . իսկ մարդը անոր համար կը գործէ՝ որ ըրածին կամ գործածին ունի ըլլալը , այսինքն ինչ է բայց կամ նիշտառ ժամանակն ու աղբային համար կամ իր հետեւելով ունի ըլլալը կը ճանչնայ . մարդը միայն զդացմունքին հետեւելով չի գործեր , հապա բանաւոր ընտրութեամբ գատում ընելով կը գործէ . իր երջանկութիւնը կը պահանջէ՝ որ ինքը օրէնք ու կարգ ճանչնայ :

« Բայց հիմակուան ատենս օրէնք ու կարգ ճանչցողը ուր է : իր բնական վախճանին՝ բընութեան որոշածին համաձայն ովլ կ'ապրի : Սիրոյ պատուղները ովլ բանաւորապէս ու չափով կը վայելէ : Նոյն իսկ մարդկութիւնը քըննող աչքով մը մարդկային ազգը զննելու ըլլայ , իր պատկերին տեսութենէն չի պիտի սոսկայ : Մարդ այս կտորիս մէջը իւր արժանապատուութիւնը՝ իր վախճանը բոլորավին մոռցեր է . ալ իր գործողութիւններուն վրայ տէր չէ , մի միայն մարմնական ցանկութեանը գերի եղեր է :

« Արդ՝ ովլ կրնայ համրել և ուղղել կամ պակսեցնել այն ամեն չարիքը՝ զորս այս ապականիչ ու մարդասպան ախտը մարդկային ազգին վրայ կը բերէ : Ինչու որ այս ախտով մարդկային մարմինին աղուորութիւնը , որն որ (այսինքն մարդկային մարմինը) փոքր աշխարհ կ'անուանի , ու աշխարհիքս ամեն կերպ աղուորութիւնն ու զօրութիւնը իր վրայ կը բովանդակէ . ապականուելով , այս մարմինը կեանքի

ու մահուան մէջ մնացած անճանաչելի բան մը,
դողդղացող՝ խեղանդամ ու տկար ստեղծուած
մը կ'ըլլայ . Ով որ բուն ատենէն առաջ ու շատ
հեղ մարմնոյ ցանկութիւնը կը գրգռէ , բուն
ատենէն առաջ ու շատ անդամ այն ազնիւ հիւ-
թերը անբնական դիճութիւնով և ուրիշ ան-
կարգութիւններով կը մսխէ կը կորսնցունէ ,
ան մարդը բոլոր իր կենացը հիւթերուն առա-
տութիւնը դէպ 'ի ծննդական անդամները կը
քալեցնէ . ասով կենաց ամեն մնուցիչ ու նո-
րոգիչ զօրութիւնները չափէ աւելի գործելու
կամ աղդեցութիւն ընելու կ'ստիպին , որպէս
զի ծննդական անդամներուն օդնութիւն ընեն ,
ու ասոնց սպառածին կամ մսխածին տեղը լե-
ցընեն : Այս ասանկ ըլլալով՝ մարմինին ուրիշ
գործարաններուն ու մասերուն հարկաւոր ե-
ղած արիւնը , որն որ կենաց և աճելու աղ-
բիւրն է , անոնց չերթար , ուստի և իրենց
մնունդը կը պակսի , պղտիկ՝ անկատար ու տը-
կար կը մնան : Մարմինը իր բնական մեծու-
թեանը չափին չի հասնիր . ու աս մոլութեան
ծառայ ըլլողը մարդկային կերպարանքին աղուո-
րութիւնը կորսնցունելով՝ խեղ ու տկար կը
մնայ կամ չոր կմախքի մը պէս կը պտըտի :
Հէշտասէր մարդը իր աշխուժութիւնը կը կոր-
սընցունէ , իր զգայարանքը բութ կ'ըլլան . ա-
մենէն աւելի աչուլները պաղած , միտքը հաստ
ու երեւակայութիւնը անկարգ կ'ըլլայ . զգա-
յունութիւնը բնական եղանակէն դուրս կ'ելնէ ,
կամ չափէն աւելի շուտ կը գրգռի , կամ բո-

լորովին թմրած կ'ըլլայ . նաև մկունքներուն
զօրութիւնը կը կորսուի : Հեշտասէր մարդը
քիչ մը շարժում ընելու ըլլայ կամ քալէ , կը
յոդնի . պղտիկ գործքի մը մէջ մոնելու ըլ-
լայ , կը քրտնի . բազկերակին զարնուածքը
կարճ ու շուտ կ'ըլլայ . թոքը տկար ու արտա-
քոյ կարգի դգայուն կ'ըլլայ . նաեւ ասանկ
մարդը արիւն թքնելու և սոսկալի թոքացաւի
կամ բարակ ցաւի յարմարութիւն ու պատրաս-
տութիւն կ'ունենայ . ստամոքսն ալ կը տկա-
րանայ , կերած կերակուրներէն միսառ ու նե-
ղութիւն կ'իմանայ , աղիքը պնդութիւնի կամ
թանչի (էստ!) յարմար կ'ըլլան . մարմինին մոր-
թը տժդպյն ու դեղին կ'ըլլայ , կը խորշոմի
(պարագանել կ'ըլլայ) ու ան ատենները կամ տա-
րիները՝ երբոր չափաւորութեամբ ապրող երի-
տասարդ՝ մը կ'սկսի զօրաւոր ու պնդակազմ
այր մը երեւալ , հեշտասէր երիտասարդը կա-
նուխ ծերութեան մօտենալով կը թարշամի : Քա-
նի քանի անձինք հազիւ երեսուն տարուան
ըլլալով , ծերի պէս կնճռեալ ճակատով , խո-
րունկյած երեսներով ու ներս դացած տկա-
րացած աշուըներով կը պտըտին :

« Ու երբ որ ասանկ մարդիկ աշխարհք մըտ-
նելով կամ ամուսնանալով իրենց ազգը աճե-
ցունելու կ'աշխատին , անոնցմէ ի՞նչ պտուղ
կընայ յուսացուիլ : Ասանկ մարդոց զաւակները
տկար մարմնով աշխարհք կու դան , ու կար-
ծես թէ ունեցած կեանքերնուն վրայ առջի
ամիսներն ալ ամենեւին ուրախութիւն ու

դուարճութիւն չեն դգար , թէ որ կեանքելունուն առջի օրերը մահը վրայ հասնելով՝ անոնք քաշելու ցաւերնէն չ'աղատէ : Աս խեղճերը աշխարհք դալէն ետքը՝ կամ գլուխնին ջուր լեցուած ըլլալուն՝ կանուխ մահուամբ կը մեռնին , կամ խոյլ (*սբահ-*) ախտէն կը մաշին , և կամ սկրներնին կակուղ կ'ըլլան , ու անով իրենց մարմինին ձեւն ու կերպարանքնին այլակերպ կ'ըլլան : Խակ թէ որ կանուխիէկ մեռնելէն մեծ դժուարութիւնով աղատելու ըլլան , աճելնին ու մեծնալնին ձիւնի տակ մնացած տունկերուն աճելուն կը նմանի . մարմիննին մարած , պաղած ու տկար , ու միտուընին հաստ ու տարտամ կ'ըլլայ . ու որչափ որ կ'ապրին ու իրենք ալ զաւակ կը ծնանին , իրենց ծնողացը անխելքութեանը անկարդութեանը . յիշատակը աշխարհքիս վրայ մշտնջենաւոր կը թողուն :

« Արդ՝ թէ որ ասանկ հեշտութեան ետեւէն ինկած մարմնամոլ մարդ մը բուն ատենին աղէկ չխրատուիր , իր մոլութիւնը շոկելու համար գեղի վնտուեր , ու իր անկարդ ցանկութեանը չափ չի դներ նէ , յայտնի բան մըն է՝ որ օրէ օր իր կործանումն ու կորուստը կը պարաստէ : Զղերուն չափէ աւելի ձկոտումն ու տրկարութիւնը սոսկալի հիւանդութիւններու ճամբար կը բանան ու հիմ կը դնեն , ինչպէս են ախոնդանոտութիւն (*չ-ը-ռ-ռ-է-լ-ր-ս-*) , կատաղութիւն , լուսնոտութիւն կամ թալկացում (*ս-ը-ր-ս-*) . ասոնցմէ ի զատ երկարատեւ ջերմը ասանկ մարդու

վրայէն պակաս չ'ըլլար , անանկ որ ողորմելին
ասդին անդին պտըստող գիտ (Դուեն) մը նման
կ'ըլլայ . արտաքոյ կարդի մարմնոյ տաքու-
թիւնը , գիշերները չափէ աւելի քրտինքը ,
ու սաստիկ փորքշուքը խեղճը անդադար կը
նեղեն . կռնակին վրայ այն կերպ զգացում մը
կ'ունենայ , որպէս թէ մըջուններ (Է-ՌԵՆ-Հ-Ա-Ե-Շ) կը
պտըստին , կամ թէ մէջը բոլորովին պարպած
է . ոտուըները կ'ուռին . ինքը բոլորովին ընդ-
հանուր տկարութեան մը մէջ կ'եյնայ , ու վեր-
ջապէս հու և հու կամ Հ-Ե-Ր-Շ-Ա-Ն ըսուած հիւան-
դութիւնով կը մեռնի :

« Ստոյգ է՝ որ ամեն հեշտասէր մարդ բո-
լոր աս ցաւալի հետեւանքները՝ մէկէն կամ
առջի տարիները չիմանար . բայց ով որ կը կար-
ծէ՝ թէ ասանկ հետեւանքներէն բոլորովին
կրնայ աղատ մնալ , մեծապէս կը սխալի : Աս
կոորիս մէջը շատ մեծ տարբերութիւն կ'ընէ
հեշտախտական գործքերը սկսելու ժամանակը
ու անսնք կատարելու չափը կամ աստիճանը .
որչափ աւելի ուշ կ'ակսուի աս ախտը ու որչափ
աւելի քիչ կը գործուի , վնասն ալ այնչափ ա-
ւելի քիչ կ'ըլլայ : Կան անանկ մարմիններ ալ՝
որ արտաքոյ կարդի մեծ արտադրիչ զօրութիւն
ունին , և երկայն և մեծ աշխատութեան կրնան
դիմանալ առանց երեւելի վնաս կրելու : Բայց
շխտակն ըսելով , չը կոյ հեշտասէր մարդ մը , որ
աս բանիս մէջը բոլորովին անվնաս ու անպա-
տիժ մնայ , թէ և իր երիտասարդութեան ատենը
չարաչար վնասներէն աղատ մնայ , ծերութեան

ատենը շատ մեծ խեղճութիւն ու նեղութիւն
քաշելու կը պարտաւորի : Ժամանակէն առաջ
ուժէ կ'լինայ , մարմինը կը կծկի վար կը ծռի ,
զդայարանքներուն ուժը կանուխէկ կը կոր-
սուի , անդամները կը դողդողան , քալուածքը
դժուար ու դողդոջուն կ'ըլլոյ , ևայլն : Բնու-
թիւնը ինք իրմէ չէ սահմաներ՝ որ մարդ իր
ծերութիւնը հիւանդութիւններու մէջ անցընէ .
մանաւանդ ան տարիներու կամ հասակի մէջ ,
որն որ հիմակուան ծերերը շատ մեծ նեղու-
թիւններով անցնելու կ'սկսին : Ո՛վ որ իր երի-
տասարդութեան օրերը խելքով ու տռաքի-
նութիւնով անցուցեր է , ան մարդը ծերու-
թեան ատենն ալ իրբեւ երիտասարդ կընայ
ապրիլ ու առողջութեամբ օրերն անցընել : Զօ-
րաւոր ծերի մը հարցընենք , թէ ինչու համար
իր ծերութեան ատենը այնչափ ուժով է : Պա-
տասխան կուտայ՝ որ ես հիմակուան երիտա-
սարդներուն պէս կեանք չեմ անցուցեր . երի-
տասարդութեանս ատենը կենացս աղէկ հիւ-
թերը կըցածիս չափ խնայելով դործածեցի .
քսան տարուան եղած ատենս դեռ չէի դի-
տեր՝ որ երկու սեռ մարդ կայ :

* Անկարգ ու անչափ հեշտախօսութեան
խխատ զարհուրելի հետեւանքներուն մէկն ալ
մաշողական ախտն (ֆրէն+ բ-բ-բ) է , որն որ մարդ-
կային ազգին վրայ եկող պինդ սոսկալի ցաւե-
րուն մէկը կը սեպուի : Ասիկայ իրաւցընէ անանկ
ապականիչ ժանտախտ մըն է , որ մարդուն մար-
մինին ծուծը կը չորցնէ կ'ուտէ . բռնած մարդը

դարշելի թունաւոր անասունի մը կը դարձնէ .
անոր աղուոր կերպարանքը զզուելի ցուցանքի
մը կը փոխէ , ու աստուծմէ տրուած անէծքի
մը պէո մարդը կամ մարդկային աղգը կը մաշէ :

« — Ի՞նչ են , կըսէ Հուֆէլանտ , ի՞նչ են՝
առ մաշողական ախտին նայելով՝ մարդուս խխոս
մահարեր թոյներն ալ : Միայն սա ախտը կեան-
քին բուն աղքիւրը կը թունաւորէ , սիրոյն վա-
յելմունքը կը լեզիցընէ , մարդուն սերմը կամ
սկիզբը դոյանալու ատենէն կ'ապականէ ու կը
մեռցընէ , ուստի և ապագայ սերունդներու
վրայ ալ իր աղդեցութիւնը կ'ընէ , հանգիստ ու
բարերադդ տներու մէջ կը մոտնէ , զաւակները
ծնողքէն ու ամուսինը ամուսինէն կը զատէ , ու
մարդկութեան պինդ սուրբ կապերը կը քակէ :
Ուրիշ բան մ'ալ կայ , այսինքն այն սոսկալի
ախտը կամաց կամաց ու իրը թէ անզգայաբար
բանող կամ աղդեցութիւն ընող թոյն մըն է , ու
ամեն անդամ մարմնոյ մէջ մոտած ատենը շուտ
մը զօրաւոր ու յայտնի նշաններով չիմացուիր
ու չի ճանչցուիր : Մէկը կընայ աս թունով բո-
լորավին ապականիլ առանց գիտեալու թէ ադ-
չար հետեւանքը ուսկից յառաջ եկաւ . հասա-
րակօրէն աս ախտը վաստկազը՝ անիկայ աղէկ
մը մարմինին վրայ տարածուելէն ու խորունկ
արմատ ձգելէն ետքը՝ գեղ մնառուելու կ'սկսի .
նաև առանց ուղելու և դիտնալու իր ախտին
թոյնը ուրիշներուն ալ կը հաղորդէ : Շատ հեղ
ալ մարդ չի գիտեր թէ արդեօք աս ախտէն բո-
լորովին ազատեց է թէ չէ : Ու թէ որ աս ա-

պղականիչ ախտը հեղ մը իր բուն սաստիլութեան սատիճանը համնելու ըլլայ , անկից ետքն ալ ի՞նչ սոսկալի աւերածներ չի դործեր մարդուն մարմինին վրայ : Բոլոր մարմինը գարշելի վէրքերով կամ պալարներով կը ծածկուի , ուսկըները կը մաշին , մարմինին զանազան մասերը կ'անպիտանան կամ կը մեռնին , քիթին ու քիմքին ուսկըները կը փոտաին , ու անով մարդուն դէմքին վայելչութիւնն ու աղուորութիւնը կը կորսուի :

« Կարճ խօսքով ըսեմ , մաշողական ախտին թոյնը իր մէջը կը բովանդակէ խիստ զօրաւոր թոյներուն տուած ցաւերը , տառապանքը , երկարատեւ նեղութիւնն ու վախը : Եւ ահա ասանկ սոսկալի թոյնը ոմանք կ'արհամարհեն ու բանի մը տեղ չի դնելով , կարծես՝ թէ անիկայ թեթեւ հազի կամ հարրուղիսի (ԱւՀԱՀ) մը պէս չնչին բան մը կը սեպեն , անանկ որ պինդ յարմար դեղերը անոր դէմ'ի դործ դընելու կը դանդաղին : Իրաւցնէ սիրտս կտոր կտոր կ'ըլլայ , երբոր ասկից ետքը գալու ժամանակները մտմտալով կը տեսնեմ՝ որ աս սոսկալի թոյնը ասանկ առանց արգելքի առաջ երթալով ու տարածուելով , պինդ պատուաւոր ու անմեղ դերդաստաններն ալ (տղաք նայող աղախիններու ու ծիծմարերու ձեռքով) ան թոյնէն պիտի ապականին (ՊԱՀՆ) , ու անով շատ անմեղաց տները առանց իրենց յանցանացը ասշար ախտին վնասները պիտի տեսնեն — :

« Ահա ասոնք են անկարդ ու անչափ հեշ-

տութեան վայելմունքներուն պատճառած բը-
նական կամ ֆիզիքական չարիքն ու մխասները .
հիմա տեսնենք բարոյական մխասները :

« Ինչպէս հեշտասէր մարդուն մարմինը կը
թարշամի ու կ'ապականի , անանկ ալ անոր հո-
գեկան զօրութիւնները բոլորովին կը կորսուին :
Ինչպէս որ բոլոր գործարաններուն կազմուած-
քին ամեն ջղերը իրենց զօրութիւնը կը կորսըն-
ցունեն , սոյնպէս ալ անոնց կեդրոնը , որ է ու-
ղեղը , իր զօրութենէն բոլորավին կ'իյնայ : Ա-
սանկ մարդը բնութեան ուրիշ ամեն ուրախու-
թեանը կամ վայելմանցը ու երջանկութեանը
համար մեռածի պէս կ'ըլլայ . ճշմարտութեան,
աղուորութեան ու աղէկութեան համար փա-
փագ ու զգացում չունենար , ու իր բոլոր զօ-
րութիւնը ամենեւին ուրիշ բանի չի բանեցներ՝
բայց եթէ հեշտական բաներու : Իր միտքը
թանձը , բարքը կամ վարմունքը (նկարագիրը,
Քըքէ՛ռ) տկար ու փոփոխական , ու իր հոգին
կամ միտքը անհաստատ ու աստանդական կ'ըլ-
լայ . իր վրան հաստատուն ու կանոնաւոր մըտ-
մըտուքներ չեն տեսնուիր , ինք իրմէ աղէկ ըլ-
լող ու աղէկ հետեւանքներ կամ պտուղներ
ունեցող բանը չի փնտռեր . իր ըրած գործ-
քերը բանաւոր ու բ-բ-կ-է-ն գործքեր չեն ըլ-
լար , հապա միայն որ բանը որ զուարճալի ու
հեշտուածէ՝ անիկայ զինքը կը շարժէ ու կը
յափշտակէ , միայն ան բաներուն կը փաթտուի
ու ետեւէն կ'ըլլայ , որոնք ներկայ վայրկենի
համար իր զգայարանքը կը դրդուն . ուստի

միայն հոգութեար կամ ռաբուէն կը դործէ : Անանկ դործողութիւններու՝ որոնց համար քիչ մը աշխատութիւն , ինքզինքը յաղթել , ու մահցուցում հարկաւոր է , բոլորովին անկարող կ'ըլլայ : Ասկից ՚ի զատ , սիրոյ մէջ անկարգ ու անշափ ըլլալը բաւական չի սեպելով , ուտելու խմելու մէջ ալ չափազանց կ'ըլլայ , ինչու որ իր տկարութեանը զգացմունքը հասարակօրէն անկարգ ու անշափ վայելմունքով՝ մանաւանդ բարկ կամ ոգելից ըմպելիքներ խմելով իրմէ հեռացնելու կ'աշխատի , որպէս զի իր անկարգ վարմունքին չար խիղճը զգայարանքներուն թմրեցուցիչ դինովութեանը մէջը թաղէ կորոբնցունէ :

« Ասանկ մարդու մը հետ ով կրնայ բարեկամութիւն ընել . ասանկ մարդը իր բարեկամին դաղտնիքը դուրս կը հանէ , անիկայ կը խաբէ , իրաւունքն ու արդարութիւնը կը ծախէ . այսինքն ստակի ու շահի համար արդարութենէ կը հեռանայ , ու իր անսանձ ցանկութիւնը զանազան կերպով կատարելու միջոցներ ու ճամբայ դտնելու համար իր մեծերուն ու հայրենեացը դէմ դող ու մատնիչ կ'ըլլայ :

« Ահա այն սքանչելի սէրը , որն որ բնութեան կանոնացը հետեւելու ըլլայ՝ ուրախութիւն ու կեանք կու տայ ու մարդկային կենաց արեւը կ'ըլլայ , այն անկարգութիւններով զարհուրելի հրէշքի կամ ցուցանքի մը կը դառնայ , որ իր թունաւոր շնչովը մարդկային աղդը ֆի-

զիդապէս ու բարոյապէս կ'առլականէ , ու
թշուառութեան , տանջանքի ու մահուան
գիրկը կը տանի կը նետէ : Աս առլականիչ ժան-
տախտը միայն ան ատենը կընայ արդելուիլ՝
կամ գոնէ չափաւորուիլ , երբ որ իւր աղրիւրը
կը գոցուի , այսինքն երբ որ իր պատճառը
մէկդի կը վերցուի : Մարդուս երջանկութեանը
համար շատ հարկաւոր բան մըն է՝ որ աս ան-
կարդ հեշտախտութեան պատճառները ծնո-
ղաց , դաստիարակներուն կամ տղոց կրթիչնե-
րուն , ու իշխաններուն առջեւը դրուին , որ-
պէս զի ամեն դօրութիւնով անոնց ճար ընելու
աշխատին , ու իրենց զաւակները , աշակերտ-
ներն ու հարատակները աս վտանդաւոր ճամ-
բէն , որն որ անտարակոյս մշտնջննաւոր կորըս-
տեան մէջը կը տանի , ետ քաշեն ու դուրս
հանեն » :

(Երես 166-181) :

Մեր Հայաղդի բժշկին այս խօսքերը ըն-
թերցողներուս առջեւ դնելէս յետոյ , պարտա-
ւոր կը գտնեմ ինքդինքս քանի մը խօսք ալ
անոնց ընելու , որոնք բնականաբար այս տետ-
րակը կարդալէն վերջը պիտի հարցընեն թէ
Համա ի՞նչ ընեն երիտասարդները , միթէ
ամուսնանան առանց իրենց վիճակը ասլահով-
ցընելու , առանց բաւական հարստութիւն գի-
զելու , առանց նայելու որ առած աղջիկը հա-
րուստ , հաւատարիմ և գեղեցիկ լինի » :

Երիտասարդ ընթերցողացս այս հարցութե-
րուն պարտիմ պատասխանել , միայն թէ պէտք

է որ ամեն մէկ հարցման դատ դատ պատասխանեմ :

1. Թէ երիտասարդները առանձնաւունք՝ էն :

Ով ինչ կուզէ թող ըսէ , իսկ ես կ'ըսեմ , ամեն երիտասարդ երբ քսան և չորս տարեկան եղած են՝ պարտաւոր են ամուսնանալ , քանի որ բընութիւնը իրենց մէկ կիրք մը տուած է , որոյ օրինաւոր գործադրութիւնը մի միայն ամուսնութեան մէջ հնարաւոր է կատարել . . . ես այս սկզբունքս ետ կ'առնում թէ որ մէկը կրնայ հաստատել թէ ամուսնանալէն 'ի զատ կայ ուրիշ միջոց մը որով ցանկական կիրքը կը յագենայ առանց մարդկային կազմութիւնը վտանգի ներքեւ գնելու :

Գուցէ թէ մէկը ըսէ որ « կը զսպեմ իմցանկութիւնս » . բայց ես կը պատասխանեմ թէ .

— Ա . Բաելը գործադրել չէ .

— Բ . Շատ մեծ ապուշ մի լինելու է մէկը որ կարենայ իր ցանկութիւնը զսպել , վասն զի այսպիսի մէկը անշուշտ պակասաւոր լինելու է որ բնութեան ամենէն մեծ մղումը չ'զգար .

— Գ . Բնութիւնը բռնութեան հպատակեցընելը բնութիւնը եղծել է և հետեւաբար աս ալ իր անթիւ վտանգներն ունի :

2. Թէ երիտասարդները առանձնաւունք՝ էն առանց էնեց Քէն-կը աղանգշնելու :

Այս հարցման իմ մի միայն պատասխանս է թէ՝ երիտասարդ մը որ մինչեւ քսան և չորս



ՁԵՒ

Առաջ երիտասարդի



ՁԵՒ

Ավուաւը երիտասարդի

տալիքան եղած առենը գժբաղդարար չէ կա-
րողացեր օրական ապրուստ մը գտնելու միջոց
մը ձեռք անցնել , անանկին համար աւելի յոյս
կայ ամուսնանալէն վերջը համեստ շահ մը ձեռք
բերելու , և հաւատարիմ կողակցի մը հետ եր-
ջանկոթեամբ և հանգստոթեամբ ապրելու :

Յ. Թէ երէսուսութները ամուսնութուն են առաջ հա-
րըստութիւն դէքը : Յիրաւի ես չեմ գիտեր թէ
փոխադարձ սէրէն ի զատ մեծ հարստոթիւն
կրնայ մի դանուիլ , և ամենեւին չեմ կրնար
գիտնալ թէ ոսկիի առատութիւնը ինչ կրնայ
ընծայել ամուսնացեալներու . ոհ , միթէ բա-
ւական համոզուած չենք թէ՝ ոսկիին առա-
տութիւնը չէ թէ միայն երջանկութիւն չի կըր-
նար մատակարարել ընտանեաց մէջ , այլ նա-
եւս խիստ շատ անդամնոցաթշուառութեանը
պատճառ կը լինի , և ես շիտակը մեծ երա-
նութիւն չեմ տար հարուստ երիտասարդի մը
հետ ամուսնացող աղջկան մը , վասն զի ՀԱ-
ՐՈՒՍՏԸ ԱՄԵՆ ԿՈՂՄԱՆԿ ՀԱՐՈՒՏ ԼԻՆԵԼ ԿԲ
ԲԱՂՋԱՑ ՄԻՇՏ : Սէր , իմ սիրելի ընթերցողս ,
սէր միայն հարկաւոր է ամուսնանալու համար ,
և հաւատաւ ինձ որ՝ երիտասարդ մը և աղջիկ
մը , թէ և աղքատ լինին , փոխադարձ և ՀԱՄ-
ՏԱՏՈՒՆ սիրով եթէ ամուսնանան մէկդմէկու
հետ՝ իրենց համար երջանկութեամբ և խաղա-
դութեամբ ապրիլը շատ հեշտ և գիւրին կը
լինի . . . երկու իրար սիրող բարեկամներու հա-
մար մէկ նստարանն ալ բաւական է , և մէկը
որ կ'ուզէ երկինքին օրինակը տեսնել , թող

մտնէք այն աղքատիկ սենեակին մէջ , ուր զիրար ճշմարտապէս սիրող այր և կին նստած իրենց ջուր ու հացը կ'ուտեն , երբեմն երբեմն քաղցր հայեցուածք մը նետելով իւրեանց մանկան՝ որ անմեղութեամբ կը հանգչի առողջարար ոչխարի մը մորթին վրայ . իսկ ասոր հակառակը՝ գնա այն մեծատան պալատը և տեսթէ ատելութիւնը ինչե՞ր չըներ հոն , ոսկիի առատութիւն կայ հոն , սյո՛ , բայց Սէր չի կայ , ինչու որ այն ընտանեաց ամեն մէկ անդամները ամեն բան շուայլութեամբ ունենալով՝ վայելման զդացմունքը կորուսած , ինչ ընելին չի գիտցող յիմարներ դարձած են . . . ահա դըժոխքն ալ հոս է : իրաւ է , ես չեմ կրնար ուրանալ ամենեւին թէ Սէրը երբեմն արքունեաց , պալատներու և մեծատուններու բնակարաններու մէջ կը մտնէ . . . բայց Երիելն միայն , վասն զի ուր ոսկին կը խօսի՝ Սէրը կը լուէ հոն , ուր ոսկին կը տիրապետէ՝ Սէրը կը փախչի անկից . այնպիսի շքեղ և ոսկելոց շէնքերու մէջ տիրող ամենէն երեւելի բանը շողոքորթութիւնը և արտաքին քաղաքականութիւններն են , Մի խաբուիր ամենեւին , իմ սիրելի ընթերցողս , երբ կը տեսնես հարուստներուն զուարթ դէմքերը , գիտցիր որ անոնք քեղի ծաղր ու ծանակ չը լինելու համար միայն խնդում երես և գոհ կ'երեւան . հաւատան ինձ , որ նոցա կուրծքին մէջ այնպիսի որդեր կան , որոց ամեն մէկ խածուածքը՝ մահէն ալ դժբնդակ է և թունալից :

Արդ՝ Երիտասարդ՝ մը ամուսնանալու համար՝ աւելի յարմար է, թէ որ չափաւոր ապրուստ մը շահելու տրամադրութիւնն ունի . . . իրաւ է որ աղքատութիւնը խիստ դժնդակ է, բայց սա ալ իրաւ է որ՝ աղքատութեան ծանրութիւնը շատ կը թեթեւնայ՝ թէ որ սէրը տիրէ ընտանիքի մը մէջ :

4. Թէ Երիտասարդները հորուսակ պահեներ քուսաւ վագուսակներն են, հետեւնին ամենանալու համար : Ես ամենեւին ասոր դէմ բան մը չեմ կրնար ըսել. թէ որ անհնար չէ հարուստ աղջիկ մը առնել առաջին օժիտը սէր լինելով : Երիտասարդ ընթերցող, թէ որ կենացդ երջանկութեանը և խաղաղութեանը կը ցանկաս՝ դու զքեզ ճշմարտապէս սիրող աղջիկ մը ամուսին ընտրէ, կ'ուզէ հարուստ լինի, կ'ուզէ աղքատ . և վստահ եղիր ինձ որ, այս աշխարհիս մէջ ամենէն մեծ թշուառութիւնը պիտի ճաշակես, թէ որ աղջիկ մը միայն իւր հարստութեանը համար առնելու լինիս . ինչու որ՝ հարուստ աղջիկները շատ անդամ հպարտ, ինքնահաւան և դիմացիննին մարդու տեղ չի դնողներ կը լինին, և շիտակը խօսելով, դիշատիչ թռչունի մը ճանկերուն մէջ իյնալը նախապատիւ է, քան թէ 'ի սիրոյ օտարացեալ և իւր հարստութեամբը փարթամութիւն, ճոխութիւն, փառաւորութիւն փնտուող աղջկան մը հետ ամուսնանալ: Վերջապէս առաջին կարգի անմոռութիւն կ'ընեն այն Երիտասարդները՝ որոնք ամեն բանէ

առաջ աղջկան մը ստացուածքին ցուցակը կը պահանջեն , և շիտակը՝ թէ որ ես աղջիկ մը լինէի՝ շատ զգոյշ պիտի լինէի որ և իցէ յարաբերութիւն ունենալ այնպիսի մէկու մը հետ՝ որ իմ ոսկիներուս վրայ դրած է իւր յոյսը , և նոցա վրայ տնկած է իւր աշուրները : Իմ մասնաւոր կարծիքէս աւելի անթիւ անհամար փորձեր մինչեւ այսօր յայտնած են թէ՝ մէկըզմէկու հարասութիւնը փնտոելով և հասկնալով ամուսնացողները երջանիկ եղած չեն ամենեւին . ուստի ես դարձեալ կը կրկնեմ թէ՝ երիտասարդ մը , որ պիտի ամուսնանայ , ամեն բանէ առաջ այնպիսի աղջիկ մը փնտոէ՝ որ կը սիրէ զինքը , եւ առանց երկիւդի պարտի ամուսնանալ նորա հետ :

Թէ երեսուները գելոցին ողջին բնորուելու չէ՞ն , ամուսնալու համար : Ասիկայ այնպիսի հարցում մի է , որոյ պատասխանելու համար՝ մի միայն բնութեան կրնամք դիմել , և անկէց ուսանիլ թէ՝ ամեն երիտասարդ մի և նոյն աղջկան դեղեցիկ չը կրնալ ըսելովն՝ հարկաւ որ և իցէ աղջիկ մը չի կրնար ամեն երիտասարդներէն միանգամայն դեղեցիկ տեսնուիլ , ուստի ասկէց կը հետեւի թէ՝ ամեն աղջիկ դեղեցիկ են ; սակայն մէկը իմ աչքիս դեղեցիկ կ'երեւայ , ուրիշ մը քեղի , և մէկ ուրիշն ալ ուրիշ մը . և շատ անգամ փորձը յայտնած է թէ՝ մէկ երիտասարդի մը աչքին դեղեցիկ երեւցող աղջիկ մը ուրիշ երիտասարդի մը աչքին տգեղ

կ'երեւայ . արդ՝ իրողութիւնը քանի որ այս
պէս է , առանց բնականի դէմ խօսած լինելու
կրնամք ըսել թէ՝ երփտասարդ մը այն աղջկան
հետ ամուսնանալու է , որ իւր աչքին գեղե-
ցիկ կ'երեւնայ , միայն թէ մեծ զգուշութիւն
բանեցնելու է որ՝ գեղեցկութիւնը շինծու չի
լինի . . . սատանայէ մը աւելի տգեղ են այն
աղջիկները՝ որ արհեստական միջոցներու կը
դիմեն գեղեցիկ երեւնալու համար :

Ըստոր ասոնցմէ ետքը հարցում մի առ կը
մնայ , այսինքն թէ

6. Երեւանութերը ի՞նչեւ որոշելու են ո՞յն ո՞չընկե-
րը , ո՞րո՞ւ հասուարձէմ , ո՞ւրազ , համբերու և քո՞ն ամուսնուն
կընաւ ի՞նչէ :

Յիրարի այս հարցման կը փափաքէի որ
պատասխանէի և լիուլի կերպով բացատրէի
այն ամեն արտաքին երեւոյթները և հանգա-
մանքները , որոնցմավ հաւատարիմ , սիրող ,
համբերող և դոհ ամուսին լինող աղջիկը՝ ան-
հաւատարիմ , շուտով պաղող , անհամրեր և
դժդոհ ամուսին լինողէն կարելի է որոշել ա-
ռանց սխալելու . սակայն երկու մեծ պատ-
ճառներ կ'արդիլին զիս այսպիսի գիտութիւն
մը առ այժմ հրատաքակելէն :

Նախ . ինչու որ մեծ գայթակղութիւններ
և կռիւներ կրնան ծագիլ շատ ընտանիքներու
մէջ :

Երկրորդ . որովհետեւ շատ ապացուցուած
է թէ՝ աղջիկ մը որ իմ ամուսինս լինելով հա-

ատարիմ, յարատեւ սիրով, համբերով և գոհ
կը լինի, ուրիշի մը ամուսին լինելով անհաւա-
տարիմ, պաղող, անհամբեր եւ դժգոհ կը լի-
նի, և թէ ամեն երիտասարդի բնական կազ-
մուածքին յարմար պէտք է ամուսին լինելու
աղջիկը որոշել։ Ասկից յայտնի կ'երեւայ թէ՝
որքան բաղմահատոր գիրք մը պէտք է հրա-
տարակել այս խնդիրը պարզապէս լուծելու և
յայտնելու համար։

Ահա այս երկու պատճառներով զանց կ'ը-
նեմք այս մասին հրատարակմամբ պատասխա-
նելէն, միայն թէ կը խոստանամք որ՝ ով որ
կ'ուղէ այս մասին մեր հրահանդը ընդունիլ,
կընայ բանիւ ստանալ։

Ահաւասիկ լմնցաւ մեր այս վոքրիկ աշ-
խատասիրութիւնը, որ սրտերնուս չայ երի-
տասարդութեան վրայ զգացած ցաւին պատ-
ճառաւ միայն կը հրատարակեմք, և յիրաւի
թէ որ միայն մէկ երիտասարդի մը բարելաւու-
թեանը և երջանկութեանը պատճառ լինի այս
աշխատութիւնը՝ ես իմ վարձքս առած կը լի-
նիմ. և ալ ամենեւին հոգ չեմ ըներ բոլոր այն
տարածայնութիւնները որոնց շատ հաւանական
է որ ենթակայ մը պիտի լինիմ ես . . . ի՞նչ զար-
մանալի է մարդկային ընկերութիւնը. նա որ
կը պարձենայ իրեւ արարածոց գերագոյնը՝
կը խոնարհի սովորութեան առջեւ, և իւրբա-
րելաւութեանը համար աշխատող մէկ անդամք
փոխանակ խրախուսելու և քաջալերելու կը
նախատէ և կը վշտացընէ. բայց հող չէ, մենք

որ շատ աղեկ գիտեմք թէ մեր առաջին պար-
տականութիւնն է մարդկային ընկերութեան
բարեացն համար աշխատիլ, պատրաստ եմք
համբերել ամեն նախատինքներու, միայն թէ
օդակար լինիմք և պատասխանատու չի մը-
նամք բնութեան: Արդեօք ներելի է ինձ ա-
զաշել ամեն այն ազդայնոց որոնք մենէ շատ
աւելի տեղեկութիւններ և միանդամայն տա-
զանդ ունին այս տետրակիս նպատակին վրայ՝
որ բարեհաճին ձայն բարձրացնել Հայ երիտա-
սարդներուն, 'ի սէրն Հայութեան, մարդկու-
թեան և քրիստոնէութեան, և շատ աւելի
բացայայտ և զօրաւոր կերպով իմացնեն նոցա
թէ ինչ վտանգներու ենթակայ են, քանի որ
շարունակեն իւրեանց արդի հեշտական ընթաց-
քը բոլորովին բնութեան պահանջածին հա-
կառակ:

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՔ ԲՈՌԻՑ

→→→→ՉԾ↔↔↔

Ախոնդանոտութիւն .	Ներած . Հ-ը-ր-ս ա-կ-լ-յ-ս :
Ախտաժէտ .	Ա-լ-լ- է-լ-է-ն-ի-լ- :
Ամորձիք .	հ-յ-ր-ս-ը :
Արանդամ .	Ե-ր-+Ե-+Լ-ի-+ ա-լ-ե-ն-ը :
Արբունք .	հ-ա-ր-ր-ը ո-յ-ի-լ-ս-ո-ն :
Արդասաւորութիւն .	չ-օ-դ ո-ք-ը-ր-մ-ի-լ-ը :
Արդասական անդամ .	ա-ր-դ-ո-ւ-մ- ա-լ-ս :
Բազկերակ .	ն-ո-ր-ն-:
Բղջախոհ .	շ-ն-ն-է-ն-է մ-ի-ո-ն-է-լ- :
Գիճութիւն .	ա-ղ-ի-շ-յ-ս վ-ր-մ-ի-լ-ը :
Գրգռում .	ն-ո-ն-ր-ի-ն-ի-ն- :
Երիկամունք .	ո-յ-է-օ-պ-ր-է-+ :
Զուգաւորիլ .	ճ-ի-ս- է-լ-ո-ւ-է-+ :
Թալկացում .	ո-յ-ց-ը-լ-ս- :
Թան .	է-ւ- ա-ր-ը-ն- :
Թոքացաւ կամբարակ ցաւ .	վ-է-ր-է-ս :
Ժանտութիւն .	ի-ն-ա-լ-ի-ն- :
Լուսնոտութիւն .	ո-ր-ս է-լ-է-ն-է :
Ծայր մաշկ .	շ-լ-+ի-ր-ի-ն ի-ս-ո-ս ո-ե-ր-ի-ն-ի-ն ս-ո-ն-ս- :
Ծիւրութիւն .	շ-ո-յ-ի-ն-ի-ն- է-ր-ի-ն- :
Ծխաղամորջ .	ն-ի-ն-ի-ն- չ-ո-դ-ո-ւ-ն-ս- :
Ծննդական դորձարան .	ո-ք-ը-ր-մ-ի-ն- ա-լ-ե-ն-ը :
Կենսական հեղուկ .	հ-յ-ր-ն վ-է-ր-ի-ն մ-ո-պ-ո-ւ-է :
Խիթոր .	ֆ-է-ր-ճ-ն ո-յ-լ-ճ-ի-ի-լ- :
Հանու .	է-ր-է-ր :
Հարբուզիս .	ն-է-լ-ս-դ-ի-լ-:

Հեշտախտ .	շնչառել :
Հեշտական շոայլութիւն .	շնչառել - շնչառ նաև պահանձ :
Հիւծումն .	երեւել . դարձնել :
Հոսում .	աքսու :
Մածուցիկ .	ե-քաջախու :
Մաշկ .	ուերել :
Մաշողական ախտ .	ֆրեն + մարմար (վերել) :
Մարմաֆում .	բաշնում :
Մերձաւորութիւն .	ճիւմ :
Միզանցք .	սկրիւ + եւըսւ :
Միզանցքաբորբոքում .	սկրիւ + եւըսւ-նուու ի-ֆիւնելին :
Մկունք .	ուուլք էրել . աղուլք :
Պալարի .	զիուն :
Աերմ (արական)	իւսունցն նեֆու :
Աերմ հեղուկ .	իւսիւս-ս . նեփու :
Աերմնահոսութիւն .	նեփուն աքսում :
Աերմնարան .	իւսիւս-մլութ :
Աերմնարար .	իւսիւս-ս , նեփու հուսուլու իւսիւն :
Աերմնատու .	իւսիւս-սու վերեն - լլուն :
Աերմնարդ .	նեփու գուրում :
Ա երմնամաշկ .	իւսիւն ուերել :
Տափական ախտ կամ շնչառելուն հասըլ շլան (հաս- հիւանդութիւն) .	իւսլք :
Տափական հեշտութիւն .	շնչառել :
Յանկութիւն .	շնչառել :
Փամփուշտ .	քուլ-քու-լու :
Փոխադրական (ախտ) .	ուու-լուլք (իւլքն)
Քանկրի :	շնչառու . (ուիր նեփու եւըսւ) :





